




ՀԱՄԱԽՈՐՀԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ ՍԱՏԱՐԵԼ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹԵԱՆ



Սերժ Սարգսեան, Գագիկ Մառուկեան եւ Արթուր Պաղտասարեան յուշագրի ստորագրման արարողութեան պահուն

Փետրուար 17-ին Հայաստանի համախոհական կառավարութեան մաս կազմող երեք կուսակցութիւններու՝ Հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան» եւ «Օրինաց Երկիր» կուսակցութիւններու ղեկավարներ՝ Սերժ Սարգսեան, Գագիկ Մառուկեան եւ Արթուր Պաղտասարեան ստորագրեցին միատեղ յուշագիր, ուր երեք իշխանական կուսակցութիւնները կը համաձայնին յառաջիկայ խորհր-

դարանական ընտրութիւններուն չփոխել իրենց միջեւ ուժերու յարաբերակցութիւնը եւ 2013-ի նախագահական ընտրութիւններուն պաշտպանել Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Մառուկեանի մամուլի խօսնակ Խաչիկ Գալստեան «Ազատութիւն»

Շաբ.ը էջ 4

45 ՏԱՐՈՒԱՅ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԵՆԷ ԵՏՔ ՀԱՅ ԵՐԵՍՓՈՒՄԱՆՆԵՐ ԿՐՆԱՆ ՅԱՅՏՆՈՒԻԼ ԹՈՒՐՔԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԵՆ ՆԵՐՍ

Թուրքիոյ վարչապետ Ռեճեփ Թայիփ Էրտողանի գլխավորած «Արդարութիւն եւ Զարգացում» իշխող կուսակցութիւնը 2011 Յունիս 12-ին կայանալիք խորհրդարանական ընտրութիւններուն կը պատրաստուի առաջադրել պոլիտիկայի համայնքի վեց ներկայացուցիչի թեկնածութիւնը:

Թրքական «Զաման» օրաթերթի համաձայն, Էրտողանի կուսակցութիւնը, ամենայն հաւանականութեամբ, պիտի առաջադրէ «Թարաֆ» օրաթերթի յօդուածագիր Մարգար Եսայեանի, Իսթանպուլի Սուրբ Փրկիչ հիւանդանոցի հոգաբարձուներու խորհուրդի նախագահ, մեծահարուստ Պետրոս Շիրինօղլուի, Մելքոն Քարաբոսաճի, Թադէոս Պեպեքի եւ ձերի շրմեանի թեկնածութիւնը:

Իսկ «Ազգայնական շարժում» ընդդիմադիր կուսակցութիւնը կը քննարկէ Գեղամ Կարապետեանի թեկնածութեան հարցը:

«Եթէ համաձայնութիւն ձեռք բերուի պոլիտիկայի ներկայացուցիչներու եւ կուսակցութիւններու միջեւ, մեծ է հաւանականութիւնը, որ 45 տարի անց Թուրքիոյ խորհր-

դարանին մէջ յայտնուին նաեւ հայ պատգամաւորներ», - կը գրէ «Զաման» լրագրողը, որ Թուրքիոյ Հանրապետութեան պատմութեան ընթացքին խորհրդարանին մէջ ազգային փոքրամասնութիւնները ներկայացուցած են 23 պատգամաւորներ, որոնցմէ վեցը եղած են հայեր:

Խորհրդարանական ընտրութիւններուն կը պատրաստուին ազգութեամբ հայ թեկնածուներ առաջադրել նաեւ Ժողովրդահանրապետական ընդդիմադիր եւ «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» քրտամէտ կուսակցութիւնները: Ժողովրդահանրապետականները կը քննարկեն Արեւ ձէպեճիի, Իսկ քրտամէտ կուսակցութիւնը՝ Վրոյ, լրագրող Հայկո Պաղտասի թեկնածութիւնները:

Ըստ «Ռատիքալ» թերթի տուած լուրերուն, խումբ մը մտաւորականներ առաջարկած են «Խաղաղութիւն եւ Ժողովրդավարութիւն» քրտամէտ կուսակցութեան ընտրական ցուցակին մէջ ընդգրկել «Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինքի այլին՝ Ռաֆէլ Տինքը, սակայն վերջինս մերժած է:

«ԵԹԷ ԱՌԱՋԻՆ ԳԻԾԻ ՎՐԱՅ ԿՈՐՈՒՄՏՆԵՐ ՈՒՆԵՑԱԾ ԵՆՔ, ՀԱԿԱՌԱԿՈՐԴԸ ԿՐԿՆԱԿԻ ՊԱՏԺՈՒԱԾ Է», - ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեանի Փետրուար 22-ին Երեւանի Պետական համալսարանին (ԵՊՀ) ներս իր ունեցած ելուցքի ընթացքին յայտարարեց, որ տարուէ տարի հայկական բանակին մէջ կարգապահութիւնը կ'ամրապնդուի, հրամանատարներն ու այլ ղեկավար անձեր՝ տարաբնույթ պատահարներու դէմ կանխարգելիչ աշխատանքներ կը կատարեն:

Անդրադառնալով մամուլին մէջ հայկական բանակի մասին գրուող «վատ յօդուածներուն», Սէյրան Օհանեան ըսաւ, որ պաշտպանութեան նախարարութիւնը բաց է հասարակութեան առջեւ, կ'ընդունի տեղին քննադատութիւնները, «բայց չարախօսները միշտ էլ չարախօսելու են»: Նախարարը ըսաւ, որ իրենք, զանգուածային լրատուամիջոցներու հետ կը մշակեն համագործակցութեան ծրագիրներ, որուն իբրեւ արդիւնք, վերջին շրջանին «չարախօսական յօդուածները նուազած են», քանի որ «հասկացած են, որ անոնց կարիքը չկայ»:

Սէյրան Օհանեան յայտնեց, որ վերջին տարիներուն հայկական բանակին մէջ ճարտարապետական սարքաւորումները կատարելագործուած են, ստեղծուած են մարտական հերթապահութեան իրականացման համար անհրաժեշտ անվտանգութեան համակարգեր: «Եթէ տեղի է ունենում որեւիցէ մի խախտում, եթէ հակառակորդի կող-



Հայաստանի Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան

մից խոցում կամ վիրաւորում է տեղի ունենում, դա նշանակում է, որ տեղում զինծառայողն ինքը չի պահպանել անվտանգութեան կանոնները: Շատ հազուադէպ դէպքեր են լինում, երբ հակառակորդի դիպուկ կրակոցով հենց խրամատախորշի մէջ մենք ունենում ենք կորուստներ», - ըսաւ նախարարը, աւելցնելով, որ նման դէպքերու պատճառը նաեւ լարուած ծառայութիւնն է:

Միեւնոյն ժամանակ Օհանեան յայտարարեց, որ երբ հայկական կողմը հակառակորդին պատճառով կորուստներ կ'ունենայ, հակառակորդը կը պատժուի. «Զի եղել որեւիցէ մի դէպք, երբ մենք առաջին գծում ունենանք կորուստներ եւ հակառակորդը մեր կողմից չպատժուի կրկնակի անգամ»:

«ԵԹԷ ԵՐԿՐԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՐՏԱԳԱՂԹԸ, ՆՇԱՆԱԿՈՒՄ Է՝ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ԻՐ ԿԵԱՆՔԻՑ ԴԺԳՈՐՅ Է», - Կ'ԸՍԷ ՍԴՅԿ ԱՆԴԱՍԸ

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Կեդրոնական վարչութեան անդամ Վահան Շիրխանեան հարցազրոյց տուած է «Հայեացք» շաբաթաթերթին: Պատասխանելով լրագրողի այն հարցին, կա՞յ արդեօք Հայաստանի մէջ քաղաքական ճգնաժամ, ընկ. Շիրխանեան պատասխանած է.

«Այսօր քաղաքական ճգնաժամ է եզրկտրուում, արաբական մի շարք երկրներում: Քաղաքական ճգնաժամն արտայայտուած է ներքին սուր հակադրութեամբ, Հայաստանում այժմ այդպիսի հակադրում չկայ: Եթէ աւելի խորանանք, թէ քաղաքական ճգնաժամի տարր կարո՞ղ է լինել քաղաքական դաշտի չկայացումը, կուսակցութիւնների գաղափարախօսական աշխատանքների բացակայութիւնը, քաղաքական էլիտայի ցածր որակը, այո, կարելի է ասել, որ Հայաստանում քաղաքական ճգնաժամի տարրերն առկայ են»:

Լրագրողը հետաքրքրուած է, թէ Տիգրան Կարապետեանի առա-

ջին հաւաքի բազմամարդութիւնը չի՞ յուշեր, որ երկրէն ներսքաղաքական ճգնաժամ կայ եւ դժգոհութեան մեծ լիցք՝ իշխանութիւններու նկատմամբ.

«Եթէ երկրից շարունակուած է արտագաղթը, նշանակում է՝ ժողովուրդն իր կեանքից դժգոհ է: Դա սոցիալական, տնտեսական բնույթ ունի: Սոցիալ-տնտեսական վիճակից դժգոհողները Հայաստանում շատ-շատ են, մեր երկրում աղքատութիւնը չի յաղթահարուած, սոցիալական արդարութիւն չի հաստատուած: Եւ բնական է, որ հանրահաւաքներին մեծաթիւ մարդիկ պէտք է ներկայ լինէին», - ասել է Հնչակեան գործիչը:

Այն հարցին, թէ Հնչակեան կուսակցութիւնը ո՞ր քաղաքական ուժի հետ կ'ուզէ համագործակցել: Շիրխանեան պատասխանած է. «Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը համագործակցութեան խնդիր առայժմ չունի, աշխատանքները կատարում ենք մեր կուսակցութեան ներսում»:

ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԵՂԱՐԸ

ՅԱԿՈԲԱՌԱՆԵԱՆ

Հայաստանի գիւղնախարարութիւնն ու Հայ Առաքելական Եկեղեցին կարծես թէ պայմանաւորուել են, որ հոգեւորականները պէտք է օրհնեն Հայաստանի դաշտերն ու այգիները, որ դրանք լինեն բերքառատ եւ գերծ մնան բնութեան քմահաճոյքից: Չարմանալի է, թէ ինչպէս է, որ գիւղնախարար Սերգօ Կարապետեանին աւելի հոգեհարազատ է եղել ոչ թէ ասենք խորով Յարութիւնեանի քրիստոնեադեմոկրատական կուսակցութիւն, այլ Արթուր Բաղդասարեանի Օրինաց երկիրը: Բայց դա իհարկէ իմիջայլոց, քանի որ տուեալ պահին էականը գիւղնախարարութեան եւ եկեղեցու միջեւ պայմանաւորուածութիւնն է:

Իսկ այն իր մէջ ակնյայտ վտանգներ է պարունակում Հայ Առաքելական Եկեղեցու համար, եւ կարող է պարարտ հող ստեղծել այսպէս կոչուած աղանդների համար: Բացատրեմ, թէ ինչու: Հոգեւորականները պէտք է օրհնեն դաշտերն ու այգիները: Շատ լաւ: Բայց, արդեօք ինչ երաշխիքներ կան, որ բնութիւնը չի շարունակի հարուածներ տեղալ դրանց՝ եթէ ոչ այս, ապա ասենք յաջորդ տարի, կամ մի քանի տարի անց: Եկեղեցին օրհնանքի քանի՞ տոկոս արդիւնաւէտութիւն է երաշխաւորում: Բա որ կարկուտը էլի խփեց ու աւերեց, ո՞վ է պատասխան տալու եկեղեցու, հոգեւորականի հեղինակութեան, նրա օրհնանքի վարկանիշի համար: Չէ՞ որ աղանդները կարող են դրանից ակտիւանալ ու ասել, թէ տեսաք, բա որ ասում ենք մեր խօսքն է ճշմարիտը, ոչ թէ եկեղեցունը: Չէ՞ որ կարող է լինել այդպիսի բան:

Թէեւ, ինչ խօսք, բացատրութիւն միշտ էլ կարելի է գտնել: Օրինակ, կ'օրհնուի դաշտը կամ այգին, բայց մէկ էլ կարկուտը կը խփի: Այդ դէպքում հոգեւորականը կասի, որ եթէ ինքը չօրհներ դաշտը կամ այգին, կարկուտը աւելի ուժեղ կը խփէր, կամ աւելի յաճախ կը խփէր: Ասենք, կարկու-

տը երկու օրը մէկ է եկել, կ'ասէր, որ օրհնանքը չլինելու դէպքում կը գար ամէն օր: Կամ, եթէ եկել է ամէն օր, ապա կ'ասէր, որ օրհնանքը չլինելու դէպքում կը գար օրը երեք անգամ: Այդ տեսանկիւնից, իհարկէ, կայ բացատրութիւն եւ իրավիճակից էլք:

Իսկ եթէ լուրջ, ապա կարծես թէ մենք գտնուում ենք մի անելանելի իրավիճակում, երբ պետական կառույցն ու եկեղեցին իրենց բուն գործը թողած, ինչ որ պայմանաւորուածութիւն են կնքում դաշտ ու այգի օրհնելու համար: Մինչդեռ, զարմանալի է օրինակ, թէ ինչու եկեղեցին ոչ թէ գիւղացու հետ է փորձում այդպիսի պայմանաւորուածութեան գալ, այլ պետական կառույցի: Օրինակ, ինչու եկեղեցին չի գնում եւ իր օրհնանքը չի առաջարկում անմիջապէս գիւղացուն, ով հողի սեփականատէրն է: Կամ, ինչու գիւղնախարարութիւնը գիւղացուն պարզապէս չի առաջարկում մի անգամ էլ դիմել օրհնանքի միջոցին, այլ ինքն է գնում եւ ինչ պայմանաւորուածութիւն կնքում եկեղեցու հետ:

Այստեղ իհարկէ հարցն օրհնել-չօրհնելը չէ: Ի վերջոյ, ինչպէս կրօնի, դաւանանքի ընտրութեան, այդպէս էլ դրանից կեանքի այս կամ այն դրուագում օգտուելու ինդիքը խիստ անհատական խնդիր է եւ ամէն մարդ ինքը կ'որոշի, թէ ինչը օրհնել տայ, ինչը՝ ոչ: Հարցն այստեղ երեւոյթն է, երբ այդ անհատական խնդիրը փորձ է արւում տեղաւորել հարկատուների փողերով աշխատող մի կառույցի գործունէութեան շրջանակում, որը ունի անմիջական շատ այլ պարտականութիւններ այդ հարկատուների՝ մասնաւորապէս գիւղացիների առաջ: Մնում է, որ գիւղնախարարութիւնը օրհնել տայ նաեւ գիւղացիներին տրամադրող վարկերը, պարարտանիւթը, գիւղտեխնիկան:

Մնում է նաեւ, որ պետական միւս գերատեսչութիւններն էլ սկսեն ինչ որ համանման պայմանաւորուածութիւններ կնքել եկեղեցու

հետ, այն դարձնելով իրենց անգործութեան եւ անարդիւնաւէտութեան վահան: Ըստ երեւոյթին, պետական կառույցներում սկսել են հասկանալ, որ աւելի ու աւելի խոցելի են դառնում իրենց անմիջական պարտաւորութիւնների կատարման տեսանկիւնից, որոնք սահմանում են Սահմանադրութեամբ եւ օրէնքով: Աւելի ու աւելի վատ են կարողանում ապահովել քաղաքացիների կեանքի որոշակի մակարդակ, սոցիալական վիճակը աւելի է ծանրանում, քաղաքացիներն աւելի են դժգոհում:

Այդ պարագայում, երբ Սահմանադրութեան ու օրէնքի շրջանակում դառնում են խոցելի, լաւագոյն պաշտպանութիւնը դառնում է բարոյականութեան շրջանակը, առաւել եւս, որ ի տարբերութիւն Սահմանադրութեան եւ օրէնքի, այն բաւական յարաբերական շրջանակ է: Իսկ բարոյականութեան լաւագոյն օղակարանը կարող է լինել եկեղեցին, նկատի առնելով տասնամեակների, հարիւրամեակների կամ գուցէ հազարամեակների անկախ պետականութեան բացակայութեան պարագայում եկեղեցու հանդէպ ձեւաւորուած հանրային վերաբերմունքն ու ընկալումները, որոնք շատ չաճախ ընդամենը իրացիոնալ կարծրատիպեր են, որ խանգարում են թէ հասարակութեան, թէ հենց եկեղեցու բարեփոխմանը, արդիականացմանը (եկեղեցու պարագայում իհարկէ հասկանալի է, որ բարեփոխումը շատ աւելի սեղմ շրջանակներ եւ բովանդակութիւն կարող է ունենալ, քան հասարակութեան պարագայում: Բայց նաեւ աներկբայ է, կայ արդիականացման լուրջ խնդիր, քանի որ Հայ Առաքելական եկեղեցին համարժէք չէ հոգեւոր, հասարակական ժամանակակից խնդիրներին):

Ընդ որում, յատկանշական է, որ այդ ամէնի մասին մտահոգութիւն արտայայտող անձինք անմիջապէս ներկայացոււմ են որպէս եկեղեցու դէմ գործող: Չգիտես ինչու, Հայաստանում եկեղեցին ընդունելու, եկեղեցու հանդէպ յար-

գանքի նշան է դարձել օրինակ այն, որ պէտք է ամէն քայլափոխի կողքը հոգեւորական լինի, որը պէտք է ամէն ինչ օրհնի՝ կուսակցական համագումարից, մինչեւ գուարձանքի որեւէ կենտրոնի բացում: Անհատական մակարդակով այդ ամէնը շատ լաւ է, ողջունելի, բայց երբ այդ ամէնը դառնում է արարողակարգի, այն էլ պետական արարողակարգի ու քարոզչութեան մաս, դա արդէն ոչ թէ նպաստում է եկեղեցու հեղինակութեան եւ հանրային վարկի բարձրացմանը, այլ եկեղեցին դարձնում է գործիք պետութեան ձեռքին, ընդդէմ այլախոհ քաղաքացիների: Մինչդեռ այսօր գլխաւոր խնդիրն այն է, որ Հայ Առաքելական եկեղեցին գտնի քաղաքացիների հետ անմիջական առաւել արդիւնաւէտ եւ առարկական կապի ուղիներ, ինչի համար անհրաժեշտ է, որ եկեղեցին առաւել քաջատեղեակ լինի քաղաքացիական կեանքի խնդիրներին եւ համարժէք արձագանքի դրանց:

Այդպիսով, տուեալ դէպքում մտահոգիչն ինքնին երեւոյթն է, այն, որ գիւղնախարարութիւն-եկեղեցի պայմանը կարող է լինել «պիլոտային» մի ծրագիր, որը հետագայում կիրառում կը գտնի նաեւ պետական կառավարման համակարգի այլ կառույցների գործունէութեան մէջ, աւելի ու աւելի նոյնացնելով պետութիւնն ու եկեղեցին: Յետոյ կը հասնի Սահմանադրութեան մէջ փոփոխութիւն կատարելու եւ եկեղեցուն պետական որեւէ իրաւական կարգավիճակ տալու հերթը, ոստիկանապետական Հայաստանին յազգնելով կրօնապետութեան վեղար վեղար, որի տակից խաչի անունով կը գործի մահակը՝ մէկ ֆիզիկական, մէկ բարոյական, ըստ իրավիճակի, հայեցողութեան, կամ տրամադրութեան:

«ԼՐԱԳԻՐ»

ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԵԸ

Լ. ԱՍԱՏՐԵԱՆ

Արաբական աշխարհի բռնապետների վախճանը մեծ անհանգստութիւն է պատճառում Հայաստանում իշխանութիւնը բռնազաւթած ուժին: Գուցէ բնագործ, իսկ գուցէ տրամաբանութեան դեռեւս պահպանուած փշրանքներով զգում են՝ իրենց վտանգ է սպառնում: Հասարակութիւնն էլ, թուում է, հասկացել է, որ համակերպուելն ու հնազանդուելը որեւէ լաւ բան չեն խոստանում եւ պատրաստում է վճռական պայքարի:

Մտնում է Մարտի մէկը: Բնական է, որ ջանք չեն խնայելու հասարակութեանը լռեցնելու համար: Եւ քանի որ նախորդ հանրահաւաքից առաջ արդէն անդրադարձել ենք իշխանաւորների՝ բողոքի ալիքը կասեցնելու ճիգերին, տեսնենք, թէ ինչ նոր երանգներ են ի յայտ գալու այս անգամ: Իսկ «նորութիւն» յորինելը այնքան էլ հեշտ չէ, որովհետեւ գործ ունենք դասական իրավիճակի հետ՝ հայկական թէթեւ շեղումներով: Ուստի պիտի առանձնացնենք երեք «ուղղութիւն», որոնց օգնութեամբ

Ս. Սարգսեանն ու նրա թիմը պիտի փորձեն երկարաձգել Հայաստանի բռնազաւթումը:

- ա) Ղարաբաղեան խնդրի շահարկում,
- բ) Ուժային կառույցների ցուցադրական մոբիլիզացիա,
- գ) Ճնշումներ ընդդիմադիրների նկատմամբ եւ կեղծ ընդդիմութեան գովազդ:

Անդրադառնանք վերջինին: Ընդդիմութեանը նեղը զցելու փորձերը միշտ եղել են եւ լինելու են, աւելին՝ պայքարի թէժացմանը գուզահեռ ուժգնանալու են: Սա է պատճառը, որ բանտերում են պահուում քաղբանտարկեալները, որ եթեր չի տրուում Ա1-ին: Սա է պատճառը, որ կոալիցիոն համաձայնագիր ստորագրել տալուց անմիջապէս յետոյ ՀՀԿ-ն նետուել է «մարտի»՝ իր երիտասարդ կարիերիստներին օգտագործելով («Արծիւները» անիմաստ պարը երեւանում): Ասուլիս բանավէճերով սկսուեց շաբաթը, եւ մենք դարձանք լուր «ըմբռնչանքներ» հերթական ՀՀԿ-ականի փիլիսոփայական մտքերը: Այսպէս, պատգամաւոր Արտակ Չաքարեանը վիճում էր Արամ

Կարապետեանի հետ եւ համոզում նրան, իշխանութիւն միշտ էլ լինելու է, որ մեր իշխանութիւնը բարի է գտնուել ընդդիմութեան նկատմամբ, շփուել է նրա հետ խորհրդարանում եւ այլ ձևով: Հասկացա՞նք: Իհարկէ, հասկացանք, չնայած մի քիչ դժուար է ըմբռնել այն, ինչ տրամաբանութիւնից դուրս է: Կարծում ենք՝ սոյն երիտասարդը կամայ թե ակամայ արտայայտում է աւազակապետական ողջ վերնախաւի կարծիքը: Իշխանութիւն ասելով՝ նրանք երէկ հասկանում էին Ռոբերտ Քոչարեան, այսօր՝ Սերժ Սարգսեան եւ, անշուշտ, սրանց բուժած նոմենկլատուրան: Ուրեմն իշխանութիւն միշտ լինելու է, եւ լինելու են միշտ իրենք: Սա են անդադար կրկնում՝ փորձելով կոծկել սեփական վախը արթնացող հասարակութիւնից: Ընդդիմութիւնն էլ, ըստ իրենց, ՀՅԴ-ն է, որն առանձնապէս ընդդիմութիւն էլ չէ շատ պարզ պատճառով: Այս կուսակցութեան լիդերները նոյնքան մեղսակից են 2008 թուականի Մար-

Շաբ.ը էջ 18

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 SOPEA ԱՐՇԱԿ ՂԱԶԱՆԾԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
 ՂԱԲՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱԳԱ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ
 ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀԱԿ-Ը ԱԶԴԱՐԱՐՈՒՄ Է ՀԱՆՐԱՅԱԲԱՔԱՅԻՆ ՍԵՁՈՆԻ ՍԵԿՆԱՐԿԸ



Մատենադարանի առջև հալաֆուած հազարաւոր ժողովուրդ մասնակցեցան ՀԱԿ-ի հանրահաւաքին

Ընդդիմադիր Հայ Ազգային Կոնգրէսը (ՀԱԿ) Փետրուար 18-ին Մատենադարանի յարակից տարածքում կազմակերպուած բազմամարդ հանրահաւաքում պահանջեց Սերժ Սարգսեանի հրաժարականը եւ արտահերթ ընտրութիւններ:

Ելոյթ ունեցան ՀԱԿ-ի մաս կազմող Հայոց Համագրային Շարժում (ՀՀՇ) կուսակցութեան վարչութեան նախագահ Արամ Մանուկեանը, Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեանը, ՀԱԿ մամուլի խօսնակ Արման Մուսիսեանը, ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբեանը եւ, իհարկէ, ընդդիմութեան առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանը:

Լեւոն Տէր-Պետրոսեանի ելոյթը գերազանցապէս նուիրուած էր երկրում սկիզբ առած սոցիալական բողոքի ակցիաներին եւ քաղաքացիական ակտիւնութեան դրսևորումներին, որոնք նա որակեց «հուժկու եւ վճռական»:

Զուգահեռներ անցկացնելով Ղրղըզստանի, Թունիսի, Եգիպտոսի չեղափոխական իրադարձութիւնների հետ՝ Հանրապետութեան առաջին նախագահը վստահութիւն չայտնեց, որ այդ «չքահանդէսը» վաղ թէ ուշ հասնելու է նաեւ Հայաստան:

Լեւոն Տէր-Պետրոսեանը յաւելեց, թէ անցանկալի զարգացում-

ներից խուսափելու միակ միջոցն արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւններն են, որոնք արդէն, «քաղաքական անհրաժեշտութիւնից առաւել, վերածուել են ազգի ու պետութեան գոյութեան խնդրի»:

«Իրավիճակն արմատապէս վերափոխելու ուղղուած կոնկրետ գործեր ձեռնարկելու փոխարէն, վարչախումբն իրեն հանգստանում է «Հայաստանում սոցիալական բուռն չի լինի» հանգերգով:

Սակայն, ի դժբախտութիւն այդպէս կարծողների, սոցիալական բուռն կոչուածն, ինչպէս ասում են, գէշ խապաթ ունի. այն տեսանելի է դառնում միայն տեղի ունենալուց յետոյ: Սոցիալական պայթիւնի օրն, ըստ այդմ, նոյնքան ծածուկ ու անակնկալ է, որքան ահեղ դատաստանի օրը, իսկ Սերժ Սարգսեանի մուքարաբացումն ընդամէնը ժամանակի հարց է», - եզրափակեց ընդդիմութեան առաջնորդը:

Հանրահաւաքի վերջում ելոյթ ունեցող Լեւոն Զուրաբեանը յայտարարեց. - «Յաջորդ միտինգը Մարտի 1-ին է լինելու՝ շատ աւելի հզօր, խնդրում եմ այս ինֆորմացիան տարածել մեր ժողովրդի մէջ եւ պատրաստուել շատ լուրջ իրադարձութիւնների»: Հանրահաւաքն աւարտուեց երթով:

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆԸ ՍԵՐՃԵՑ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԲՈՂՈՔԸ

Վերաքննիչ դատարանը «Արթիկ» քրէակատարող ակն հիմնարկում անցկացրած նիստում մերժեց ընդդիմադիր քաղաքական գործիչ, «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի պաշտպանական կողմի վերաքննիչ բողոքը:

«Հայկական ժամանակ»-ի գլխավոր խմբագիր պաշտպանական կողմը վերաքննիչ դատարանից պահանջում էր բեկանել Արագածոտնի մարզի ընդհանուր իրաւասութեան դատարանի՝ անցած տարուայ Նոյեմբերի 19-ի վճիռը, որով դատարանը հրաժարուել էր՝ անվաւեր ճանաչել Փաշինեանի պատժաչափը 3 տարի 10 ամիս 29 օր սահմանելու մասին որոշումը:

2008 թուականի նախագահական ընտրութիւններին յաջորդած իրադարձութիւնների առնչութեամբ 2010-ի Յունուարին 19-ին 7 տարուայ ազատազրկման դատապարտուած Փաշինեանի նկատմամբ վերաքննիչ դատարանի Մարտի 9-ի որոշմամբ համա-

ժաչափի չկրած մասը կիսով չափ կրճատուել էր:

Վերաքննիչ դատարանի որոշումը հիմք ընդունելով՝ «Նուբարաշէն» քրէակատարողական հիմնարկի պետ Տիգրան Նաւասարդեանը Մայիսի 25-ին Փաշինեանի պատժաչափը սահմանել էր 3 տարի 10 ամիս 29 օր՝ նախնական կալանքի տակ գտնուելու 10 ամիսները եւս համարելով պատժի կրում: Ըստ այդ հաշուարկի՝ Փաշինեանը պէտք է ազատ արձակուի 2013 թուականի գարնան վերջին: Մինչդեռ, նրա պաշտպանական կողմը համոզուած է, որ Նաւասարդեանը պէտք է կիսէր 7 տարուայ ազատազրկման ժամկէտը, վերջնաժամկէտ համարել 3,5 տարին, եւ Փաշինեանը 2013-ի Յունուարին դուրս կը գար բանտից:

Փաշինեանը եւ նրա փաստաբանները համոզուած են, որ պատժաչափը սխալ է հաշուարկուած, եւ այդ սխալ հաշուարկի հետեւանքով Նիկոլ Փաշինեանը շուրջ 5 ամիս աւելի է մնալու բանտում:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱԼԻՔ ԿԸ ՀԱՍՆԻ ՆԱԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասել է, թէ երբ երկրում չեղափոխական իրավիճակ կը լինի, եւ ժողովրդի ցասման ալիք կ'առաջանայ, ընդդիմութիւնն ինքնաբերաբար ամբողջական ճակատով հանդէս կը գայ:

ՀՀԿ խմբակցութեան ներկայացուցիչ Արտակ Զաքարեանն էլ նշել է, թէ եթէ ընդդիմութիւնը սպասում է, որ ժողովուրդը պէտք է անպայման ցատուծի մէջ լինի, որպէսզի իրեն ձայն տայ, ուրեմն միշտ էլ այդպէս ընդդիմութիւն կը մնայ:

Արամ Կարապետեանը նշել է, թէ չեղափոխութիւնների այս ալիքը սոցիալական արդարութեան պահանջով է լինում եւ կարող է նաեւ Հայաստան գալ:

«Այլ բան է (Աստուած չանի)՝ դա կը լինի արիւնո՞վ, թէ՞ առանց արիւնի», - ընդգծել է նա:

Լրագրողների հետ հանդիպմանը անդրադառնալով ՀՀԿ-ի, ԲՀԿ-ի եւ ՕԵԿ-ի ստորագրած նոր լուրջագրին՝ «Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանն ասել է, թէ ինքը դժուար է հասկանում այն, որ կողմիցիայի չփլուզուելը ներկայացուած է որպէս յաղթանակ:

«Միգուցէ միջկլանային փոխյարաբերութիւնների մէջ ինչ-որ մէկն ինչ-որ մէկի նկատմամբ յաղթանակ տարաւ, բայց քաղաքա-



«Նոր ժամանակներ» կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեան

կան էթիկայի կանոններից ելնելով՝ դա մեր գործը չէ: Իսկ քաղաքագիտական տեսանկիւնից դա այն էր, ինչ կար, եւ կողմիցիայի ներսում ինչ-որ մէկի կողմից (եւ նկատի չունեմ ո՛չ ՀՀԿ-ին, ո՛չ ԲՀԿ-ին) պարզապէս չփլուզուելը ներկայացնել յաղթանակ, մի քիչ դժուար է: Հիմա որոշում է կայացուել ապաւինել այն քաղաքական կուսակցութիւններին, որոնք նախկին ընտրութիւններում Սերժ Սարգսեանին դարձրել են գործող իշխանութեան ղեկավար», - ասել է նա:

Ըստ Արամ Կարապետեանի՝ ընդդիմութեան համար այսպէս շատ աւելի հեշտ է լինելու, որովհետեւ կեղծ ընդդիմութիւններ չեն լինելու, եւ այդ ձայներն էլ անցնելու են ընդդիմութեանը: Ընդ որում, ընդդիմութիւն ասելով նա նկատի ունէր ոչ միայն ՀԱԿ-ին, այլ նաեւ միւս ընդդիմադիրներին:

ՓՈՍԹԱՆՃԵԱՆԻ ԵՂԲՕՐ ԳՈՐԾՈՎ «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ»Ը ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ «ՊԱՏԵՐԱԶՍԵԼ ՄԻՆՉԵՒ ՎԵՐՋ»

Աժ «Ժառանգութիւն» խմբակցութեան անդամներ Ստեփան Սաֆարեան, Զարուհի Փոսթանճեան, Լարիսա Ալուբերդեան եւ փաստաբան Հայկ Ալումեան Փետրուար 21-ին լրագրողներու հետ հանդիպման ընթացքին անդրադարձան Զարուհի Փոսթանճեանի եղբօր՝ Տիգրան Փոսթանճեանի նկատմամբ յարուցուած քրէական գործին:

Ստեփան Սաֆարեան նշեց, որ ընտրութիւններու նախաշէմին իշխանութիւնները կը փորձեն քաղաքական հաշուեալարդար տեսնել աշխոյժ հասարակական գործունէութիւն ծաւալող այն անձերուն հետ, «ովքեր կարող են սպառնալ իշխանութեանը եւ աթոռները մէջ-մէջ անելուն»: Ան Տիգրան Փոսթանճեանի նկատմամբ յարուցուած քրէական գործը «թխուած» գործ համարեց:

«Այդպէս որ լինէր, մենք էլ կարող էինք ուրիշ լիքսեան փաստաթղթերին յղում անելով՝ «Ժառանգութեան» կայքում գրել, որ ապացուցուած է, որ դատախազութիւնը կաւատ է կամ մարդկանց վաճառքով է զբաղուած», - նշեց Սաֆարեան:

Ան ըսաւ որ իրենք տեղի ունեցածը կը դիտարկեն իբրեւ «Ժառանգութիւն» կուսակցութեան նկատմամբ հաշուեալարդար: «Զարուհու եղբայրը գոհ է, հարուածն էլ ուղղուած է «Ժառանգութիւն» կուսակցութեան դէմ», - նշեց ան՝ աւելցնելով, որ գործը արդէն յայտնուած է միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններու ուշադրութեան:

Փաստաբան Հայկ Ալումեան, ներկայացնելով գործի մանրամասնութիւնները, նշեց, որ Գլխավոր

դատախազութիւնը առանց Տիգրան Փոսթանճեանին՝ պիտի հարցաքննէ անոր նկատմամբ քրէական գործ յարուցելը: «Պատահաբար մարդը դատախազութեան կայքից տեղեկանում է, որ իր նկատմամբ քրէական գործ է յարուցուել: Դատախազութեան կայքում տեղադրուած է տեղեկատուութիւն, որ նա յանցագործութիւն է կատարել, հանդիսանալով հանրային ծառայող՝ պահանջել եւ ապօրինի վարձատրութիւն է ստացել: Քրէական գործ են յարուցում անգամ այդ մարդուց բացատրութիւն չվերցնելով:

Զարուհի Փոստանճեան, իր հերթին, ըսաւ, որ չի պատրաստուել նահանջելու եւ պիտի պատերազմի ու յաղթանակ դուրս պիտի գայ: «Ովքեր պատերազմ են յայտարարել, թող իմանան, որ գնալու ենք մինչեւ վերջ», - ըսաւ ան՝ չբացատրելով, որ տեղի ունեցածը կապուած է «Ժառանգութիւն» կուսակցութեան՝ վերջերս Գլխավորի եւ Վանձորի մէջ ծաւալած աշխոյժ գործունէութեան հետ: «Տարբեր տեղերից կարող է այս պատուէրը լինել, չեմ բացառում, որ այդ պատուէրը գալիս է ամենաբարձր ատենաներից», - ընդգծեց Փոսթանճեան:

Բանախօսները նշեցին, որ պիտի չլռեն եւ պայքարը պիտի շարունակեն: Հայկ Ալումեան դիմում պիտի ներկայացնէ վարչական դատարան՝ պահանջելով հերքել տեղեկատուութիւնը եւ վնասի փոխհատուցում իրականացնել:

«Էս գործը հասնելու է Եւրոպական դատարան, եթէ պետական ատենաները փորձեն շարունակել այն է՛ս գիծը», - նախազգուշացուց փաստաբանը:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ԱՐՏՕՆԵԱԼ ԴԻՐՔԵՐՈՒ ԿԵՐԱՑՈՒՄԸ

Տնտեսութեան նախարարութեան ու արդիւնաբերողներու եւ գործարարներու միութեան նախագահութեան աշխատակազմի համատեղ նիստին քննարկուեցան Հայաստանի առեւտրական ոլորտի խնդիրները:

Միութեան նախագահ Արսէն Ղազարեան գործարարներուն խորհուրդ տուաւ իրականացնել համարձակ եւ անկաշկանդ քննարկում: «Իմ գործընկերների հարցին՝ ի՞նչ լեզուով պէտք է խօսենք, ասացի՝ համարձակ, սուր, կտրուկ, բայց քաղաքակիրթ լեզուով», - նիստի սկիզբը նախարարին դիմելով՝ ըսաւ Ղազարեան:

Նիստին քննարկուեցան արտահանման վրայ հիմնուած արդիւնաբերական քաղաքականութեան ձեւաւորման, գործարար եւ ներդրումային միջավայրի բարելաւման վերաբերեալ հարցեր: Քննարկումներ ծաւալուեցան նաեւ տնտեսութեան զարգացման համար մասնաւոր հատուածի ներկայացուցած ծրագրերուն վերաբերեալ:

Նախարարը նշեց, որ կառավարութեան գերակայութիւններէն է արտահանման ուղղուած արդիւնաբերութեան քաղաքականութեան ռազմավարութեան ձեւաւորումը: Անոր խօսքով՝ արտահանումը պէտք է ըլլայ երկրի տնտեսական զարգացման գերակայութիւնը, քանի որ Հայաստանի շուկան շատ փոքր է:

Տիգրան Դաւթեան գործարարներուն յիշեցուց, որ երկրի՝ արտահանման վերաբերեալ օրէնսդրութիւնը բաւական ազատական է: ԱՊՀ երկիրներուն հետ Հայաստանը այսօր ունի ազատ առեւտուրի վարչաձեւ, իսկ յառաջիկային, ԱՊՀ երկիրներու ծիրին մէջ, պիտի ստեղծուի միասնական առեւտուրի գոտի: Տիգրան Դաւթեանի տեղեկացմամբ՝ բանակցութիւններ պիտի տարուին նաեւ Եւրոմիութեան երկիրներու հետ ազատ առեւտուրի վարչաձեւի անցնելու ուղղութեամբ: Նախարարը ինդիք համարեց հաւաստագրման եւ հաստատուն չափանիշերու անցնելու համակարգի բարելաւումն ու եւ-

րոպական չափանիշներուն համապատասխանեցումը: Հաստատուած հայեցակարգի ծիրին մէջ, այս տարի այդ ուղղութեամբ պիտի իրականացուին մեծածաւալ աշխատանքներ:

«Դա հնարաւորութիւն կը տայ մեր ապրանքների սերտիֆիքացման (վկայագրման) համակարգը հասցնել բարձր մակարդակի, ապրանքները արագ կը մտնեն եւրոպական շուկայ եւ կը զարգացնեն այդ երկրների շուկաները», - յոյս յայտնեց նախարարը:

Գործարարներուն դժգոհութիւնները կը վերաբերէին առեւտրական միջավայրի բարելաւման, հաւաստագրման համակարգը եւրոպականին համապատասխանեցնելուն, ներդրումներու մասին օրէնսդրութիւնը կատարելագործելուն:

«Մենք էքոնոմիքայի նախարարութեան հետ երեք տարուց աւելի արդիւնաբերութեան զարգացման հայեցակարգն էինք փորձում մշակել, բայց չստացուեց: Մենք այլեւս չենք կարող երեք-չորս տարի ռազմավարութիւն մշակել, յետոյ էլ ասել՝ չստացուեց», - վրդովուած նշեց Արսէն Ղազարեանը: Անոր խօսքով, լուծումներ պէտք է գտնել արտահանման ուղղուած տեղական արդիւնաբերութեան վերականգնման համար:

«Պէտք է մեր հայրենական արդիւնաբերութեան ճիւղերի լուրջ, իրական ուսումնասիրութիւն ու գոյքագում արուի: Ճիւղեր կան, որոնք երբեք վերականգնել հնարաւոր չէ, դրանք այսօր մրցունակ էլ չեն լինի», - ըսաւ Արսէն Ղազարեան՝ չմանրամասնելով, սակայն, թէ որ ճիւղերուն մասին է խօսքը:

«Օլիգոփոլիաների (հարուստներու մենատիրութեան) սանձում պէտք է լինի երկրում, տնտեսական մրցակցութեան յանձնաժողովի գործիքների աւելի ամուր կիրառում եւ հաւասար, առանց արտօնեալ դիրքերի պիզնեսի զարգացում», - նշեց Արսէն Ղազարեան՝ աւելցնելով, որ կը հաւատայ այդ օրուան:

ՀԱՄԱՆՈՅԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

ուստիոկայանի հետ իր ունեցած հարցադրոյցի ընթացքին հերքեց շրջանառուող այն լուրերը, թէ Գազիկ Ծառուկեանին պարտադրած են ստորագրել յուշագրի եւ 2013-ին սատարել գործող նախագահ Սերժ Սարգսեանի թեկնածութեան:

«Բարգաւաճ Հայաստան»-ի ղեկավարը սկզբնական շրջանի կը մերժէր նման յուշագրի մը ստորագրել եւ այժմէն իսկ սատարել Սերժ Սարգսեանին, սակայն, քաղաքական որոշ շրջանակներու կարծիքով Գազիկ Ծառուկեանի վրայ զգործադրուած են բաւական ծանր ճնշումներ, սպառնալով նոյնիսկ ձեռքէն իլել անոր ունեցած տնտեսական մեծ լծակները:

«Պարտադրուած համաձայնութիւնները երկար կեանք ունենալ չեն կարող», - ըսած է Խաչիկ Գալստեան:

Ինչ կը վերաբերի խորհրդարանական ընտրութիւններուն միասնաբար մասնակցելու հարցին Գալստեան ըսած է, «Ե՛ւ խորհրդարանական, ե՛ւ նախագահական

ընտրութիւններում իշխանութիւնը գնում է միասնական ճակատով: Միասնական ճակատը կարող է ենթադրել եւ միասնական ցուցակներ, կարող ենթադրել եւ որ իւրաքանչիւր կուսակցութիւն կարող է իր համար պայքարել, որից յետոյ այդ ձայները կը հաւաքուեն, եւ արդիւնքում կողմիցիան աւելի պատկառելի ներկայացուածութիւն կ'ունենայ Ազգային ժողովում»:

Երեք կուսակցութիւններու կողմէ ստորագրուած յուշագրի ընդդիմադիր շրջանակներու մօտ յառաջացուց այն մտավախութիւնը, որ իշխանութիւնները այժմէն իսկ կը պատրաստուին կեղծելու առաջիկայ խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւնները:

«Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան այս կապակցութեամբ մամուլին յայտարարեց

«Անկեղծ ասած զարմացայ, որ կարելի է նման մի թեքստ ստորագրել, որը բացի այն, որ ամօթալի է երկրի համար, ամօթալի պէտք է լինի նաեւ այն ստորագրողների համար»:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍԵԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԱՍԱԴ ԱԼԱՄԻՆ

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը Փետրուար 22-ին ընդունել է Համաշխարհային բանկի (ՀԲ) Եւրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի Հարաւային Կովկասի երկրների դեպարտամենտի տարածաշրջանային տնօրէն Ասադ Ալամին:

Կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ, հանդիպման մասնակիցներն անդրադարձել են «Երկրի գործընկերութեան ռազմավարութիւնը 2009-2012 թուականների համար» ծրագրի շրջանակում գործակցութեան խորացման հեռանկարներին եւ ՀԲ-ի կողմից տրամադրուող ֆինանսական միջոցների բաշխման ուղղութիւններին: Մասնաւորապէս, առաջնա-

հերթ է համարուել զիւղատնտեսութեան, առողջապահութեան, կրթութեան ոլորտներում եւ կառավարման համակարգի բարեփոխումների ուղղութեամբ համատեղ ծրագրերի իրականացումը:

Խօսելով զիւղատնտեսութեան ոլորտի զարգացման կարեւորութիւնից, վարչապետը ներկայացրել է Հայաստանի կառավարութեան նիստում հաստատուած գիւղի եւ զիւղատնտեսութեան 2010-2020 թուականների կայուն զարգացման ռազմավարութիւնը: Այդ առումով Տիգրան Սարգսեանը կարեւորել է կոոպերատիւների խթանման, զիւղատնտեսութեան տեխնիկական վերազինման, սերմնաբուծութեան եւ անասնաբուծութեան զարգացման ուղղութեամբ միջոցառումների իրականացումը:

ԵՐԴՈՂԱՆԸ ՉԻ ԿԵՐԱԴԱՐՁՆԻ ԿԱԴԱՖԻՒ ՄՐՑԱՆԱԿԸ



Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը չի վերադարձնի Լիբիայի առաջնորդի կողմից ստացած Մուամմար Կադաֆիի անուան մրցանակը, որը տրուած է մարդու իրաւունքների պաշտպանութեան համար: Այս մասին, Թուրքիական լրատուամիջոցների փոխանցմամբ, նշուած է Թուրքիայի կառավարութեան մամուլի գրասենեակի տարածած հաղորդագրութիւնում:

Նշենք, որ Թուրքիայում գործող մի շարք հասարակական կազմակերպութիւններ Լիբիայի վերջին զարգացումների առնչութեամբ էրդողանին կոչ էին արել

վերադարձնել Կադաֆիի կողմից ստացած մրցանակը:

Թուրքիայի վարչապետն առաջիմ որեւէ յայտարարութիւն չի արել Լիբիայի դէպքերի վերաբերեալ, ինչի համար նրան խիստ քննադատութեան է ենթարկել ժողովրդահանրապետական ընդդիմադիր կուսակցութեան նախագահ Քեմալ Բըլըչդարողլուն:

Յիշեցնենք, որ Եգիպտոսում գանգուածային ցոյցերի մեկնարկից ի վեր էրդողանը պարբերաբար հանդէս էր գալիս յայտարարութիւններով՝ Մուբարաքին յորդորելով հաշուի նստել ժողովրդի կարծիքի հետ:

«Սա կոռուպցիայի ամենամեծ փաստն է, բաժան-բաժան անել աթոռները, առանց հաշուի առնելու, թէ երկու տարի յետոյ ինչ է ասելու ժողովուրդը», - աւելցուց Սաֆարեան:

Պատգամաւորի կարծիքով, աւելի պարկեշտ պիտի ըլլար, որ միախառն կառավարութեան կուսակցութիւնները (ՀՀԿ, ԲՀԿ, ՕԵԿ) համագումար հրաւիրէին եւ յայտարարէին մէկ կուսակցութիւն

դառնալու մասին: «Այն, որ քաղաքական կուսակցութիւնը յայտարարում է, թէ ինքը չի ձգտում իշխանութեան կամ չունի թեկնածու առաջիկայ նախագահական ընտրութիւններում, ո՛չ միայն բանականութիւնից է դուրս, այլ քաղաքական կեանքի կազմակերպման եւ քաղաքագիտութեան դասական ճշմարտութիւններին ուղղակի դէմ ինչ-որ բան է», - ըսաւ Ստեփան Սաֆարեան:

massispost.com
daily news updates

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎԱՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

ԹՈՒՆՈՒՉ ԿԸ ՊԱՅԱՆՋԷ ՊԵՆ ԱԼԻԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻԱՅԵՆ

Թունուզի Հանրապետության նախկին նախագահ Ջէյն էլ Ապիտին Պէն Ալիի շաբաթներ առաջ Մէնուտական Արաբիա փախուստ տալէն ետք՝ այժմ Թունուզի ժամանակաւոր վարչապետ Մուհամմատ Ղանուզին սէնուտական իշխանութիւններէն պահանջած է ապաստան գտած նախագահ Պէն Ալիի արտաքսումը:

Արդարեւ, կառավարութիւնն այս քայլն առած է արտաքսուած նախագահին դէմ, քանի որ ան բազմաթիւ ոճիրներ գործած է եւ պառակտում ստեղծած իր քաղաքացիներուն միջեւ:

Թունուզի Պետական քարտուղար Ռատուան Ռուիսի հեռատեսիլէն իր ելոյթով լաւատեսութիւն չաչտնած է որ Մէնուտական Արաբիան դրական կեցուածք ցոյց պիտի տայ իրենց ներկայացուած պահանջին:

ԻՐԱԲԻ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԸ ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԿՈՒՉԵՆ

Կեանքի խիստ անապահով վիճակը, ինչպէս նաեւ անգործութիւնը, աղքատութիւններն ու կաշառակերութիւնը իրաքի ժողովուրդի գլխաւոր մտահոգութիւնն են: Ներկայիս արձակուրդի մէջ է երկրի խորհրդարանը: Ամենօրեայ դարձած ցոյցերու ընթացքին օրուան գլխաւոր կարգախօսը ոչ միայն ժողովրդավարական կարգերու հաստատումն է՝ այլ իշխանափոխութիւն:

Պաղտատի մէջ վերջերս տեղի ունեցած մամլոյ ասուլիսի մը ընթացքին Օսամա Ալ Նուսայֆին զգայացունց յայտարարութիւն մը կատարեց կորսուած ահաւոր գումարներու մասին: ԱՆ ըսաւ թէ 39.56 միլիարտ տոլարի գումար մըն է կորսուածը եւ յայտնի չէ թէ ո՞ւր եւ ինչպէ՞ս գործածուած է, ուստի կոչ ուղղեց խորհրդարանին հետաքննութիւն մը կատարելու այս խիստ կենսական հարցին շուրջ:

ԼԻԲԱՆԱՆ ԿՍՄԲԱՍՏԱՆԷ ԼԻՊԻԱՆ ՅԵՌԱՍՓՈՒՄՆԵՐ ԽԱՆԳԱՐԵԼՈՒ ՅԱՄԱՐ

Պէյրութէն ստացուած տեղեկութեանց համաձայն Լիբանանի իշխանութիւնները բողոք ներկայացուցած են Լիպիոյ, կարգ մը հեռուստակայաններու պատկերասփռումները խանգարելու համար: Արդարեւ, անոնք իրենց հեռուստասփռումներով, լուրեր հաղորդած էին Լիպիոյ մէջ տեղի ունեցած արհմարտի բողոքի ցոյցերու մասին: Վերոյիշեալ կայաններն են «Ալ Մանար» (Հրգպալլա), «Ալ ժատիտ» (անհատական) եւ «Լիբանանի Ազգային Հեռուստակայան»ը: Այս խանգարումին մաս կ կազմէր նաեւ «Ալ ժազիրա» կայանը:

Նշենք նաեւ որ երկու երկիրները վիճարկող յարաբերութիւններու մէջ են, 30 տարի առաջ Լիպիա այցելած շիթ համայնքի կրօնապետի խորհրդաւոր անյայտացումին պատճառով: Կ'ըսուի թէ շիթ կրօնաւորը Մուհամմար Քազաֆիի կողմէ սպանուած է, իր հետ ունեցած սուր վիճաբանութենէ մը ետք: Միւս կողմէ կարգ մը քարիւղի ընկերութիւններ կը ծրագրեն իրենց պաշտօնեաները հեռացնել Լիպիայէն:

ՍՈՒՐԻՈՅ ՄԷՋ ԴՐԱՄԱԿԱՆ ՆՊԱՍՏԵՐ ԱՐՔԱՏԵՐՈՒՄ

Ծայր աստիճանի սուրիացի աղքատ քաղաքացիներ, այս օրերուն սկսան դրամական նպաստներ ստանալ: Ասիկա մաս կը կազմէ անցեալ Դեկտեմբերին սուրիական կառավարութեան կողմէ առնուած այն որոշումին, որով քարիւղի վաճառքէն գոյացած յաւելեալ գումարներէն բաժին պիտի հանուէր ծայրայեղ աղքատութեան մէջ գտնուող քաղաքացիներուն: Արդարեւ այս որոշումը իսկոյն գործադրելու դրական քայլ մը առնուած է Թունուզի եւ Եգիպտոսի քաղաքական իրադրութիւններէն ետք:

Սուրիան Եգիպտոսին նման ունի մեծ թիւով աղքատներ: 22 միլիոն բնակիչ հաշուող իր երկրի քաղաքացիներուն հարիւրէն 14-ը կը գտնուի ծայրայեղ թշուառութեան մէջ: Սուրիական իշխանութիւնները տարածաշրջանի համաժողովրդային պոթիկումները նկատի առնելով իրենք եւս որոշած են ընկերային կարգ մը հիմնական բարեկարգութիւններ կատարել երկրէն ներս:

Միւս կողմէ Իսրայէլ մտահոգութիւն չաչտնած է Սուէզի ջրանցքէն անցնող եւ դէպի Սուրիա ուղեւորող իրանի ծովային ուժերուն պատկանող երկու ռազմանավերու անակնկալ շարժումին մասին: Ասիկա իր տեսակին մէջ առաջինն է 1979էն ի վեր:

ՍԵՈՒՏԱԿԱՆ ԱՐԱԲԻՈՅ ՎԵՅԱՊԵՏԻ ՏՈՒՆ ԴԱՐՁԸ

ԱՄՆ-ի մէջ ողնայարի վիրաբուժական լուրջ գործողութեան մը ենթարկուելէ ետք Մէնուտական Արաբիոյ վեհապետ Ապտալլահ Պին Ապտիւլ Ազիզ թագաւորը՝ Յունուար 22էն ի վեր, Մարօքի Գազապլան քաղաքը կը գտնուէր կազդուրման համար:

Նոյեմբերի 22էն ի վեր արտասահման գտնուող աշխարհի մեծագոյն քարիւղ արտադրող երկրի վեհապետը հաւանաբար իր մայրաքաղաքը Ռիատ ժամանէ յառաջիկայ օրերուն: Աշխարհի անուանի հարուստներէն մին նկատուող Ապտալլահ թագաւորը 88 տարեկան է: Ան գահ բարձրացած է Օգոստոս 1, 2005ին, յաջորդելով իր խորթ եղբոր Ֆահատ արքային: Մինչ այդ ան վարած է երկրի պաշտպանութեան բանակի գլխաւոր հրամանատարի պաշտօնը 1962-էն 2010:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՍԻՆԴՐՈՍԸ

ՍԱՄՈՒԷԼ ԱԻԱԳԵԱՆ

Արաբական աշխարհում տեղի ունեցող յեղափոխական շարժումները առայժմ լոկալ ազդեցութիւն են թողնում համաշխարհային տնտեսական գործընթացների վրայ: Ինչպէս սովորաբար պատահում է նման ցնցումների դէպքում՝ աճում են հումքի գները, անկում են ապրում արժեթղթերը:

Այսպէս՝ բարձրացել է ոսկու գինը՝ մինչեւ 1396,55 տոլար/ունցիա: Առաւել հաւանական է ոսկու գնաճը կը շարունակուի: Զուգահեռ՝ թանկացել է արծաթը, 33,1 տոլար ունցիայի դիմաց: Սա 1980 թ. յետոյ արծաթի ամենաբարձր գինն է:

Միջազգային արժոյթների մէջ շարաբերակցութիւնը փոխուած է յօգուտ ճապոնական իենի՝ այն ներկայ պահին համարուած է կապիտալի ամենամեծ արժեքի արժեքը: Արդիւնքում՝ իենը արժեւորուած է եւ տոլարի, եւ եւրոյի նկատմամբ: Սակայն ճապոնական իշխանութիւնները հազիւ թէ հանդուրժեն իենի երկարատեւ արժեւորումը, քանի որ դա կը հարուածի ճապոնիայի տնտեսութեան համար կենսական նշանակութիւն ունեցող արտահանմանը:

Շատերին յուզում է այն հարցը, թէ որքա՞ն կարող է այս իրավիճակը շարունակուել, արդեօք մի քանի տասնամեայ աւտորիտար ռեժիմների անկումը կայունութեան հիմք ստեղծո՞ւմ է:

Հիմնական պատճառներից մէկը, որ արաբական աշխարհում հանգեցրել է յեղափոխական իրավիճակների, այդ երկրների դեմոկրատիական պատկերն է: 80-90-ական թուականների ծնելիութեան բումը հանգեցրել է նրան, որ արաբական ժողովուրդները «երիտասարդացել են»: 21-33 տարեկանների տեսակարար կշիռը այնպիսի երկրներում, ինչպիսիք Եգիպտոսն է, Թունիսը կամ Ալժիրը, հասել է 40-50 տոկոսի: Այդ երկրների վարչակարգերը ակնյայտօրէն հաշուի չեն առել այդ դեմոկրատիական պայթիլների սոցիալական հետեւանքները: Երկրի տնտեսութիւնը նման քանակի երիտասարդ աշխատուժի պահանջ չի կարողանում ներկայացնել, իսկ կրթական համակարգն ի վիճակի



չէ կադրերի օրակաւորման խնդիրը լուծել:

Արդիւնքում՝ արաբական աշխարհում կուտակուած է երիտասարդ մարդկանց մի հսկայական խաւ, որը գործազուրկ է, կամ ցածր աշխատավարձով՝ առանց ապագայի որոշակի հեռանկարի: Այդ «անապահ» երիտասարդութիւնն էլ իր մէջ հսկայական անկայունացնող ազդակներ է պարունակում:

Նկատենք, որ այս խնդիրը առկայ է ոչ միայն արաբական աշխարհում: Ռուսաստանը եւս նման դեմոկրատիական պայթիլների է բախուել Դադստանում եւ հիւսիսկովկասեան մի շարք այլ հանրապետութիւններում, ինչը Ռուսաստանում միջ էթնիկական կոնֆլիկտների ու լարուածութեան աճի հիմնական պատճառներից մէկն է: Սակայն Ռուսաստանը առայժմ այդ լարուածութիւնը չէզոքացնում է ահաբեկչութեան դէմ պայքարի պատրուակով:

Այս ամէնը խօսում է այն մասին, որ արաբական աշխարհում յեղափոխական շարժումները չեն կարող կարճ ժամանակում լուծել աղքատութեան եւ անհաւասարութեան խնդիրները: Աւելին՝ յեղափոխական շարժումների տարածումը նաւթով հարուստ երկրներ աշխարհում կարող է էներգետիկ ճգնաժամ առաջացնել: Իսկ դա առաջին հերթին անդրադառնալու է Հայաստանի նման էներգակիրներով աղքատ երկրների վրայ: Չմոռանանք, որ Հայաստանի տնտեսութիւնը հապէս կախուած է ներմուծումներից: Հայաստանի կառավարութեան ծրագրերը՝ ներմուծումը ըստ հնարաւորինս փոխարինելու տեղական արտադրութեամբ, առայժմ չափազանց դանդաղ են ընթանում: Գործնականում, այդ ծրագրերի յաջողութիւնից է կախուած միջազգային մարտահրաւէրներին դիմակայելու Հայաստանի կարողութիւնը:

ՆՈՐ ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՕՔԻ ՅԱՄԱՐ

Ժողովրդային ցոյցերն սկսան նոր ծաւալ ստանալ ԱՄՆ-ի համակիր Մարօքի իշխանութիւններուն դէմ: Տեղի ունեցող զանգուածային ցոյցերու ընթացքին ներկայացուած գլխաւոր պահանջն է նոր եւ բարեփոխուած սահմանադրութեան մը ստեղծումը, որպէս զի ժողովուրդը աւելի լայն դեմոկրատական իրաւասութիւններ վայելէ հիւսիսային Աֆրիկէի այս թագաւորութեան մէջ:

Նշենք նաեւ որ ցոյցերը լայն ծաւալ ստացած են նաեւ Մարօքի Թանճէր, Ֆէս եւ Մարաքէշ քաղաքներուն մէջ:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ԸՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՎԱՏՆ ՎԱՐԴԱՆ, ՔԱՋՆ ՎԱՍԱԿ ԵՒ ԴԱԲԱՃԱՆ ՎԱՐԱՆ

Բարեկամներուս՝ Վարդանին եւ Մարտիին, որոնք տարիներ առաջ յանդգնեցան իրենց երկու տրեակները անուանակոչել Վասակ եւ Վարազ

ՅԱՐՈՒԹՅԵՐ ԴԱԻԻԹԵԱՆ

Միքելի ընթերցող,
Վերի խորագիրը կրնայ ծառայել մի քանի տեսակի փորձարկութեանց:

Ա. Արդեօ՞ք թունդ ելան հայրենասիրական փափուկ զգացումները եւ չուզելով կարգալ այս յօդուածը, արդէն իսկ դաւաճանի պիտակը խարանցիր տողերս գրողի ճակտին:

Բ. Արդեօ՞ք յաղթահարելով հայրենասիրական փափուկ զգացումներդ, որոշեցիր շարունակել ընթերցումդ եւ տեղեկանալ յօդուածի բովանդակութեան:

Գ. Ընկալելէ ետք յօդուածի միտք բանին, համաձայն պիտի ըլլա՞ս անոր եւ պիտի ջանա՞ս ըրջապատիդ մէջ տարածել այդ մտածելակերպը:

Այս նախաբանէն անմիջապէս ետք յատակացնենք, որ խորագրի վարդանը չի վերաբերիր Ս. Մահակ կաթողիկոսի թոռնիկ, Աւարայրի հերոս Վարդան Մամիկոնեանին, այլ՝ Արշակ Բ թագաւորի օրով ապրած պարսկասէր Վարդան Մամիկոնեանին, իր տոհմի նահապետին, որ դաւադիր գործերու եւ սուտ մատուցման կարգին, սպաննած էր Գնէլ իշխանին: Ան սպանուեցաւ իր վասակ եղբօր ձեռքով, երբ կը փորձէր փախչիլ Պարսկաստանի Շապուհ արքային մօտ:

Գալով խորագրի վասակին, ան չի վերաբերիր Տրդ դարու մարգարան Վասակ Սիւնիին, այլ դար մը առաջ ապրած սպարապետ Վասակ Մամիկոնեանին, որ Արշակ Բ թագաւորի օրով հոյակապ յաղթանակներ կերտեց Պարսիկներու եւ Բիւզանդացիներու դէմ, մինչեւ որ դաւաճանաբար ինկաւ Անյուշ բերդ եւ տանջալից սպանուեցաւ:

Վերջապէս, խորագրի վասակը չի վերաբերիր 484ին Նուարասկ կերտած սպարապետ Վահան Մամիկոնեանին, այլ կրօնափոխ ու դաւաճան Վահան Մամիկոնեանին, որ Պարսկաստանի Շապուհ արքայի քոյրերէն մէկուն հետ ամուսնանալով, իր քրոջը զաւակ Մեհրուժան Արծրունիի հետ պարսիկ բանակներով արշաւեց Հայաստան, կործանելով եկեղեցիներ, աւերելով քաղաքներ եւ կոտորելով բազմահազար հայեր: Ան սպանուեցաւ իր զաւակին՝ Սամուէլի ձեռքով (այս դէպքէն ներշնչուելով Ռաֆիին ստեղծագործեց Սամուէլ վէպը):

Խորագրի վարդան, վասակ եւ վահան Մամիկոնեանները եղբայրներ էին: Բայց մինչ վասակ քաջութեան եւ հայրենասիրութեան տիպարն էր, վարդան եւ վահան հայրենաքանդ գործունէութիւն կը ծաւալէին: Այդ մէկը այնքան անհանդուրժելի դարձաւ, որ ինչպէս տեսանք, առաջինը սպանուեցաւ իր վասակ եղբօր ձեռքով, իսկ երկրորդը իր զաւակին՝ Սամուէլի ձեռքով: Ի՞նչ հետեւութիւններ կրնանք ընել այս օրինակէն:

Ա. Մամիկոնեան հռչակաւոր գերդաստանը, հայ ազգին տուած անձնագործ հերոսներու կողքին, տուած է նաեւ դաւաճաններ: Շատերու համար կրնայ հաճելի չի թուիլ այս մէկը ու նոյնիսկ մեղանչում կրնայ նկատուիլ ոմանց կողմէ, բայց պատմական իրականութիւն ըլլալէ չի դադրիր: Հետեւաբար, տուեալ ըն-

տանիքի մը պատկանիլը իր առաւելութիւնները կամ թերութիւնները կրնայ ունենալ, բայց պէտք է գնահատանքի գլխաւոր արժեքափ մը դառնայ:

Բ. Վասակի մը դաւաճանական արարքը պէտք է պատճառ դառնայ ուրիշ վասակներու հայրենանուէր արարքներու մթազնման, սեւով պատելով Վասակ անունը: Յատակ է, որ այս մտեցման աղբիւրը Յուդայի օրինակն է, որ դժբախտաբար որդեգրուեցաւ Եղիշէ պատմիչին կողմէ եւ օգտագործուեցաւ փառաբանելու Աւարայրի հերոս Վարդան Մամիկոնեանը ու նսեմացնելու մարգարան Վասակ Սիւնիին: Այդպիսով ժամանակի ընթացքին վասակ անունը հոմանիշ նկատուեցաւ դաւաճանութեան, անարդարօրէն մոռացութեան մատնելով հայրենանուէր վասակներ, Արծրունի, Բագրատունի, Մամիկոնեան, Պահլավունի եւ Ռուբինեան գերդաստաններէն:

Գ. Դէմքերու եւ դէպքերու սեւ-սպիտակ կտրուկ մեկնաբանութիւնը աւելի յաճախ դուռ կը բանայ բաժանումներու, քան՝ համալրման: Վարդան-Վասակ հակադրութիւնը

եւ Արշակաւան քաղաքի պատմութիւնը դիպուկ օրինակներ են: Վասակ Սիւնիի պարագային, Աւարայրի նախորդած ժամանակաշրջանին, իր գործունէութիւնը շատ աւելի դրական եղած է, քան բացասական, ինչպէս կը վկայէ մեր մատենագիրներէն Փարպեցին: Բայց նկատելով որ Եղիշէ պատմիչ մօտիկ եղած է Մամիկոնեան գերդաստանին եւ այս վերջինն ալ եկեղեցիին (որ մեր պետականութեան բացակայութեան ստանձնեց մեր ազգի առաջնորդութիւնը), հետեւաբար Աստուած-սատանայ հակադրութիւնը իր ազդեցութիւնը ունեցաւ Վարդան-Վասակ հակադրութեան առաջացման մէջ: Ժողովուրդին հայրենասիրութիւն ջամբելու ամենահեշտ ու մակերեսային, բայց ոչ ամենէն առողջ ու խորքային ուղղին էր այդ: Նմանօրինակ ազդեցութեան արդիւնք է Արշակաւան քաղաքի անուան շուրջ ստեղծուած ժխտական պատկերացումը: Հայկական պետութեան տկարացման պատճառ հանդիսացող հայ նախարարներու կեղրոնախոյս գործունէութեան դէմ ուղղուած եւ կեղրոնը հզօրացնելու քայլ մըն էր Արշակաւանի հիմնումը: Դժբախտաբար հայ եկեղեցին, որ նախարարական տուներու նման աւատապետ մըն էր, կեղրոնին դէմ դիրքաւորուելով, նպաստեց Արշակաւանի քանդման եւ անոր անուանին

սեւացման: Հետեւաբար, դարերու յառաջխաղացքին հետ, Վասակ եւ Արշակաւան անունները անարդարօրէն ստացան ժխտական պատկերացում, նպաստելով անհանդուրժողական ոգիի տարածման եւ status quo-ն փոխելու միտուած ջանքերու աժանագին սեւացման:

Յետագարձ ակնարկ մը նետելով մեր պատմութեան վրայ, կը տեսնենք որ փոխանակ ընդդիմադիրը՝ Վասակ եւ կամ վերակառուցման փորձը՝ Արշակաւան անուանելով ամբոխավարօրէն դատապարտելու եւ ձախողեցնելու անոնց բերելիք ներդրումը, եթէ զարկ տուած ըլլայինք կարծիքներու ազատ արտայայտման առողջ սովորութեան զարգացման, ապա ազգովին շատ աւելի նպաստաւոր վիճակի մէջ կ'ըլլայինք այսօր: Դժբախտութիւնը հոն եղած է, որ միշտ ալ մեր մէջ գտնուած են ուժեր, որոնք հայ ժողովուրդի շահերը նոյնացնելով իրենց հատուածական շահերուն հետ, փորձած են ինքզինքնին բռնի պարտադրել ամբողջ ազգին վրայ, պատճառ դառնալով անհանդուրժողական ոգիի տարածման եւ հուսկ՝ պառակտման, ջլատման ու տկարացման: Ու այդ պատճառաւ հասած ենք այսօրուան վիճակին:

Անցեալի ու ներկայի մեր ընթացքի վերաբերուած խիստ հրամայական է, ապագայի մեր բարօրութեան ապահովման համար:

...to prosecute persons responsible for the attack of 14 February 2005 resulting in the death of Prime Minister Rafic Hariri and in the death or injury of other persons"

تيار المستقبل

Future Movement California
Invites you to attend
the Sixth Annual Memorial
Honoring the Life and Vision of
His Excellency the Late Prime Minister
Rafic B. Al-Hariri
November 1, 1944 – February 14, 2005

«Մուսթաֆայար» Շարժումի Քալիֆորնիոյ Մասնաճիւղը Կը Հրաւիրէ Ձեզ Մասնակցելու Վարչապետ Ռաֆիք Հարիրիի Յիշատակի Հանդիսութեան՝ Նահատակութեան 6-րդ Տարելիցին Առթիւ

The memorial will be on Sunday February 27, 2011
At the Beverly Hilton Hotel - Wilshire Ballroom
9876 Wilshire Boulevard Beverly Hills, CA 90210
At 5:00 PM

المحكمة الخاصة بلبنان
SPECIAL TRIBUNAL FOR LEBANON
TRIBUNAL SPÉCIAL POUR LE LIBAN

For further information, please call 310-742-5303
www.futuremovementca.org info@futuremovementca.org

ԸՆԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱՔ ԱՌԻ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ՝ ԽԱՉԻԿ (ՔՐԻՍ) ՇԱՀԻՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ

S. Ա. ՎԱՆԱՏՈՒՐ

Ինչպես ծանօթ է հայ հասարակությանը, 2011, Մարտ ամսուան 8ին, տեղի պիտի ունենան Փաստախնայի քաղաքապետական խորհուրդի ընտրությունները, համանուն շրջանի չորրորդ ընտրաշրջանին ներս:

Ընտրելի մէկ աթոռի համար, իրենց թեկնածուները դրած են հինգ թեկնածուներ, ձիւ Ֆօսէլման, Ալէն Շայ, ձէն Ֆաստուօ, Ռամիլ Բերրէ եւ հայորդի Խաչիկ (Քրիս) Շահինեան:

Փաստախնայի պատմութեան հոլովոյթին ներս առաջին անգամ ըլլալով կը գտնուի հայ թեկնածու մը: Մեր համայնքին ներս, իր վարք ու բարքով եւ նուիրումով ծանօթ անձնաւորութիւն մըն է Պրն. Խաչիկ (Քրիս) Շահինեան, հայ թեկնածուն, որ յանդուգն կերպով հրապարակ կ'իջնէ ընտրապայքարի: Շահինեան ունի այն հաստատ համոզումը, որ շնորհիւ իր արձանագրելիք յաջողութեան -եթէ կարելի դարձաւ, անշուշտ- հայ անդամներու թիւը, յետագային, կրնայ աւելնալ Փաստախնայի Քաղաքապետական Խորհուրդին ներս: Ահա թէ ինչու, Պրն.

տեպնդիչ ընդթի ելոյթներ. որոնք ստեղծեցին խանդավառ մթնոլորտ:

Այնուհետեւ, խօսք առին հիւրընկալ Հէրի Տիրամարեան, «Մասիս» շաբաթաթերթի խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան, ծանօթ գրող եւ հրապարակագիր Թորգոմ Փօստաճեան, քաղաքապետարանի օժանդակ յանձնախումբի եւ թեկնածուին գործակից՝ Վահէ Աջապահեան, եւ հուսկ բանքով, Պրն. Խաչիկ (Քրիս) Շահինեան:

Իբրեւ հիւրընկալ՝ իր բարի գալուստի ու գորակցութեան խօսքով հանդէս եկաւ Հէրի Տիրամարեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, իրենց մասնակցութեան, գործակցութեան, նաեւ, նիւթապէս եւ բարոյապէս օժանդակելու նախատրամադրուածութեան համար: «Պարկեշտ նկարագրի տէր, առանց որեւէ կազմակերպութեան կամ դաւանանքի նիւթական կամ բարոյական աջակցութեան ենթակայ անձնաւորութիւն մըն է ան, որ մի միայն իր անձնական ծախսերով ընտրապայքար իջած թեկնածու մըն է Շահինեան, որ ամէն արժանիք ունի ընտրուելու համար: Տարակոյս



րեւոր համարեց պետական դիրքերու վրայ հայ անձերու ընտրութիւնը, որ շատ կարեւոր բարիք կրնայ ընծայել թէ հայ ժողովուրդին եւ թէ հայ հաստատութիւններուն: Իր խօսքի աւարտին, ան պատգամեց ըսելով «բարոյապէս եւ նիւթապէս օժանդակել այս պատուական երիտասարդին, որպէսզի ան յաջողի եւ ընտրուի Փաստախնայի քաղ-խորհուրդի անդամ»:

Իր խօսքը ուղղելով հիւրընկալ Տէր եւ Տիկ. Տիրամարեաններուն, Վահէ Աջապահեան իր շնորհակալութիւնները յայտնեց ներկայ հիւրասիրութեան համար: Ան շեշտեց կարեւորութիւնը այս հանգանակային ճաշկերոյթ-հաւաքին եւ ողջունեց նախաձեռնութիւնը, բարձր գնահատեց Շահինեանի արժանիքները եւ յաջողութիւն յայտնեց անոր:

Իր եզրափակիչ խօսքին մէջ, Շահինեան շնորհակալութիւն յայտնեց Հիւրընկալ գոյգին՝ Տէր եւ Տիկ. Տիրամարեաններուն, որոնք սիրալից կերպով կազմակերպեցին այս հանգանակային նշանակալից հաւաքը, որ խանդավառած էր գինք: Նոյնպէս, ան շնորհակալութիւն յայտնեց ներկայ հաւաքին մասնակցողներուն, իրենց ներկայութեամբ ցուցաբերած գործակցութեան եւ նիւթա-բարոյական նեցուկին համար: Ապա վերջապէս, Պրն. Շահինեան իր շնորհակալութիւնները յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց խանդավառիչ, քաջալերական եւ գորակցական ելոյթներով ոչ միայն խրախուսեցին, այլ նաեւ գօտեպնդեցին գինք իր ընտրապայքարին մէջ: Ըսաւ ան, թէ միասնութեան, համագործակցութեան եւ հաւատքի ճամբով, տարակոյս չկայ՝ կարելի պիտի դառնայ յաջողութեամբ պսակել իր ընտրապայքարը յանուն Փաստախնայի հայ համայնքի գորացման, եւ ազգային արժէքներու պահպանման:

Խանդավառ մթնոլորտի մէջ վերջ գտաւ ներկայ օրինակելի հանգանակային ճաշկերոյթ-ձեռնարկը, որուն համար շնորհակալութիւն են նախաձեռնող Տիրամարեան ամուրն եւ կազմակերպիչ յանձնախումբը:



Խաչիկ (Քրիս) Շահինեան կոչ կ'ուղղէ իր համայնքի ազգակիցներուն, ընտրութեան օրը խուռներամ, միասնական եւ նպատակասլաց փութալ ընտրական քուէատուփերը, յաջողցնելու համար արժանաւոր ազգակիցի մը ընտրութիւնը:

Այս մտքերով խանդավառուած, եւ առ ի գորակցութիւն Պրն. Խաչիկ (Քրիս) Շահինեանին՝ Գաղութիս ծանօթ ազգայիններէն Տէր եւ Տիկ. Հէրի եւ Արշօ Տիրամարեաններ, ի պատիւ եւ ի գորակցութիւն անոր թեկնածութեան, կազմակերպած էին հրապարակային հանգանակային ճաշկերոյթ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 30 Յունուար 2011-ին, իրենց շքեղ ապարանքին ներս, Փաստախնայ:

Ընդունելութեան ներկայ էին ընտրական յանձնախումբի անդամներ, Հայ Ամերիկեան Խորհուրդի, Ս.Գ.Հ.Կ. Հիւս. Ամերիկայի Արեւմտեան շրջանի Վարիչ Մարմնին ղեկավար անդամներ, երիտասարդական միաւորներէն ներկայացուցիչներ, մամուլի խմբագիրներ, ազգայիններ եւ համակրական լայն շրջանակ մը, որոնք եկած էին բոլորով մէկ իրենց նիւթական եւ բարոյական գորակցութիւնը յայտնելու թեկնածու Շահինեանին եւ մաղթելու անոր յաջողութիւն իր մղած դժուարին ընտրապայքարին մէջ:

Ճաշկերոյթի աւարտին, տեղի ունեցան բարի գալուստի, գորակցութեան եւ յաջողութեան եւ գօ-

չկայ, որ անոր յաջողութիւնը պիտի հանդիսանայ Փաստախնայի հայ համայնքի յաջողութիւնը, նաեւ բոլորի՝ս հպարտութիւնը, ըսաւ Հէրի Տիրամարեան եւ կոչ ուղղեց ներկաներուն, խնդրելով, որ նիւթապէս եւ բարոյապէս նեցուկ կանգնին եւ օգնեն անոր, որպէսզի իր ընտրաշաւը յաջողութեամբ պսակուի»:

Տօքթ. Արշակ Գազանճեան գնահատեց Շահինեանի տածած սէրն ու հաւատքը, հաւատարմութիւնն ու ծառայասիրութիւնը հանդէպ իր ազգին ու հայրենիքին: Բարձր որակաւորեց անոր համեատ, ուղղամիտ եւ աշխատասէր վարքագիծը: Նաեւ, ան շեշտեց հայ նոր սերունդի հանդէպ իր տածած սէրն ու հոգեկից շահագրգռուածութիւնը, ի խնդիր անոր կրթական, բարոյական, առողջապահական եւ օրինակելի քաղաքացի մը դառնալու տարուելիք աշխատանքին: Տօքթ. Գազանճեան վստահութիւն յայտնեց Շահինեանի յանձնառու անձին եւ յաջողութիւն մաղթեց անոր ընտրապայքարին:

Թորգոմ Փօստաճեան շնորհակալութիւն յայտնեց Հէրի եւ Արշօ Տիրամարեաններուն՝ ներկայ հաւաքոյթին համար՝ առ ի քաջալերութիւն եւ օժանդակութիւն Խաչիկ Քրիս Շահինեանի Փաստախնայի քաղաքապետական խորհուրդի անդամ ընտրութեան օգնելու առաջադրութեան համար: Ան կա-

ՀԱՐՍ Արտաւազ Թատերախումբը
Կը ներկայացնէ

ՉՈՐԵՔՆԱԲԹԻ... ՍԻՐԵԼԻՍ

Հեղինակ՝ ՏԵՐԵՔ ՊԵՆՅԻԼ
Բնուարդիչ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Նազարկոթեամբ՝

ՍՕՍԻ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, ՄԱՐՕ ԱԺԻՄԵԱՆ, ՆԱՐԻՆԷ ԱՌԱԳԵԱՆ
ԱԼԵԿՍ ԽՈՐԵԻՏԵԱՆ, ԹՈՒԲԷՆ ՀԱՐՍԱՆՏԱՅԵԱՆ

ՅՈՒՆՈՒՄ 22ԷՆ - ՓԵՏՐՈՒՄ 27, 2011
Շաբաթ Օրերը - ժամը 8:00-ին - \$20
Կիրակի Օրերը - ժամը 5:00-ին - \$20

ԿԱԼԱ ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆՈՒՄ 23 - ԺԱՄԸ 5:00 ԻՆ, \$50

Հ.Բ.Ը.Ս. Փաստախնայի Կեդրոն
2495 E. Mountain Street, Pasadena
Տոմարը կարծիք է ապահովել
ՀԱՐՍ Գրասենեակ 626-794-7942
ՀԱՐՍ Արտաւազ Թատերախումբ 626-710-3805
WWW.ITSMYSEAT.COM

ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ ԵՒ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ՀԲԸՄ-Ի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՈԼԷՃԻ» ՄԱՍԻՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ուրբաթ 11 Փետրուար 2011, ժամը 7: 00-ին, հաճոյքն ունեցանք ներկայ գտնուելու՝ ՀԲԸՄ Մարի Մանուկեան Տեմիրճեան Վարժարանի Աղաճանեան սրահէն ներս, (Գանդակ Բարձր), ուր տեղի ունեցաւ մամլոյ ներկայացուցիչներու հետ հանդիպում մը եւ ապա հրապարակային դասախօսութիւն մը:

Ասուլիսի հանդիսավար Դոկ. Սիրվա Գարայեան ձեռնարկի բացումը կատարեց ներկայացնելով օրուայ գեկուցաբերը՝ ՀԲԸՄ-ի կեդրոնական մարմնի անդամ եւ «ՀԲԸՄ Համացանցային Գոլէճ»-ի հիմնադիր գիտնական Տոքթ. Երուանդ Զօրեանը, որուն առաքելութիւնը կը հանդիսանար համացանցի միջոցաւ հայերէն լեզու, կարգալու ու գրել, պատմութիւն, մշակոյթ, աշխարհագրութիւն եւ այլ առարկաներ ուսուցանել աշխարհով մէկ տարածուած հայ եւ ոչ հայ ցանկացողներուն:

Բազմամշակութայնութեան դէմ Քեմերոնի այս կոչը յիշեցնում է այն մտահոգութիւնները, որ յայտնել են բազմաթիւ ինտելեկտուալներ՝ Հենրի Գեյթսը, էյլրիլըն Բիչը, Գրիգելա Փոլլոքը եւ այլք, այն մասին, որ աշխարհը դարձել է սպիտակ քրիստոնեայ տղամարդ պրոֆեսորների ակումբ, ուր մնացած բոլորը, տարբեր ուսաններ, տարբեր դաւանանք ունեցողներ ու կանայք ընդամենը ձայնագուրկ ու անդէմ ծառաներ են, ովքեր թէյ կամ բրենդի են մատուցում զուտ տղաների ակումբներում: Այն մասին, որ բոլոր տեսակի Ուրիշների ներկայութիւնը բացառող արեւմտակենտրոն դոմինացիան աղքատացնում է աշխարհը, եւ որ անհրաժեշտ է բազմաթիւ ձայների փոխազդեցութեան, մի տեսակի ստեղծագործական «բարբարոսութիւն», որը կ'աւերի մենախօսային, գաղութացնող «քաղաքակրթութեան» կենտրոնամէտ մղումները:

Եւ հարց է առաջանում՝ ինչպէ՞ս կարող են բազմամշակութայնութիւնն ու հանդուրժողականութիւնը էքստրեմիզմի առաջ դուռ բացել, եթէ անիրական ու կեղծ կարգախօսներ են: Ժիժեկը բացառապէս զրոյց էր երեսպաշտութիւնը, ինչը յատկապէս դրսեւորուած էր դրանք բախում են իսկապէս տարբեր գաղափարախօսութեան, մշակութի ու սպրեյակերպի. «Ուրիշը ողջունում է միայն մինչեւ այն ժամանակ, երբ իր ներկայութիւնը յամառ չէ, այսինքն՝ քանի դեռ իրականում Ուրիշ չէ, ահա ամբողջ լիբերալ հանդուրժողականութիւնը: Կարելի է նոյնիսկ աւելի կոպիտ ձեւակերպել՝ դարձէք այնպիսին, ինչպիսին մենք ենք, մեզ նման դարձէք, եւ այդ ժամանակ մենք կը հանդուրժենք ձեզ»:

Բազմամշակութայնութեան մասին խօսակցութիւնը արժէ շարունակել, որովհետեւ գոնէ մեզ՝ սովետական նախկին քաղաքացիներիս, դա բնաւ էլ անձանօթ չէ, դա թեթեւակի փոխակերպուած տարբերակն է մեզ քաջ յայտնի կարգախօսի՝ ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net


ԳՐԱԿԱՆ ՍՓԻՒՔ-2010

ՄԵԼԱՆԻԱԲԱԴԱԼԵԱՆ

Սփիւռք-Հայաստան գրական կապերի վերջին տարիների ակտիվացմանն, ինչ խօսք, նպաստեցին գրողների համահայկական համաժողովները Հայաստանում եւ Պէյրուսթում անցկացուած, օտարագիր հայ գրողների հաւաքներն այստեղ, սփիւռքահայ գրողների Հայաստանում պարբերաբար տպագրութեան հանգամանքը, տեղի մտաւորականութեան հետ շփումները եւ այլն: Սփիւռքը, որպէս ամբողջական օրկանիզմ ընկալելը, սխալ է անշուշտ: Հայ համայնքներն աշխարհասփիւռ, ամենատարբեր մշակութիւնների կրողներ լինելով, միաւորուած են ազգային ինքնութեան տարրերի շուրջն իհարկէ, որոնցից պարբերաբար օտարացումները պիտի ընդունել անխուսափելի երեւոյթ: Գրական սփիւռքի համար դա նախ եւ առաջ լեզուն է՝ հայերէնը, թէեւ օտարագիր հայ գրողների շատ տեղեկագրութիւններ հերքեցին այս մօտեցումը, դրանց՝ մտածողութեան եւ ներքին ոգու հայկականութեան ընդգծուած ներկայութեամբ:

Մեր ձեռքին է «Գրական Սփիւռք» տարեգիրքը տպագրուած 2010-ին, ԳԱԱՄ Աբեղեանի անունան հանձնարարութեան ինստիտուտի կողմից, Սփիւռքի նախարարութեան աջակցութեամբ: Տարեգիրքի առաջաբանը տեղեկացնում է սոյն հրատարակութեան նպատակների եւ անհրաժեշտութեան մասին: Հայաստանցի ընթերցողին սփիւռքահայ արդի գրականութեանը ծանօթացնելու միտումով տարեգիրքի խմբագրական խորհուրդը (Ա. Իսահակեան, Հր. Սարիբեկեան, Ա. Նիկողոսեան, Ա. Աւանեսեան, Վ. Դանիէլեան, Վ. Դեւրիկեան) նպատակադրւած է գտել ընդգրկելու գրական տարբեր ժանրեր՝ պոէզիա, արձակ, թատերգութիւն, գրականագիտութիւն, սփիւռքի ներկայ գրական ընթացքի հնարաւորինս ամբողջական համապատկեր ստանալու փորձով: Որքանով է յաջողուել, դժուար է ասել, քանի որ ինքնին հասկանալի են հիմնական աշխատանքի կողողինացման, հնարաւոր բարդութիւնները, աշխարհագրական ամենատարբեր հարթութիւններով կապ հաստատելը, թէկուզեւ տեղեկատուական տեխնոլոգիաների առկայութեամբ: Ինչեւէ, տարեգիրքը կազմուել է եղած արձագանքներով ընդգրկելով գրական սփիւռքի համեմատաբար հանրածանօթ, նաեւ այնպիսի անուններ. 20-ից աւելի հեղինակներ:

Ժողովածուն բացող պոէզիայի բաժնի առաջին հեղինակը լիբանանահայ Սաֆօ Արեանն է, կարելի է ասել այս շարքի ամենատպաւորիչը, իր երկու «Հոգեհան-



գիստ Վ. Օ. Շ. Ա. Կ. Ա. Ն.» եւ «Նոսթալժիա Պուրճ Համուտի պատշգամբէն» չափածոյ ընդարձակ տեղեկագրութիւններով: Նրա բանաստեղծական մտածողութիւնը սնուում է ապրած բնակավայրի առանձնատկութիւններից՝ ներկայ գրական սերնդին բնորոշ գեղարուեստական արտայայտչաձեւերով, որտեղ զգացականը առօրեականի մէջ տարրալուծուած, պոետիկ վիճակների է վերածուում. բանաստեղծական պատկերները շօշափելի են, բառային տարածքը առաձգական:

Հալէպահայ գրող, էսսեիստ Թորոս Թորանեանը, որ շուրջ 100 գրքի հեղինակ է, սփիւռքի աւագ սերնդի ներկայացուցիչ, հիմնականում ծանօթ որպէս արձակագիր, այս տարեգիրքում, սակայն, ներկայանում է բանաստեղծութիւններով:

Երեւանեան գրական եւ մերձգրական շրջանակներին ծանօթ անուն է Սոնա Վանը: Ծնունդով Երեւանից, նա երկար տարիներ բնակուում է Միացեալ Նահանգներում: Երեք գրքերի հեղինակ է, ՀՀ մշակութի ոսկէ մետալի արժանացած, «Նարցիս» գրական հանդէսի հիմնադիրը: Սոնա Վանի տարեգիրքում ներկայացրած բանաստեղծութիւնները նոյնպէս արդի գեղարուեստական ձեւերի դրսեւորումները ունեն. դրանց առհասարակ բնորոշ է բառի (երեւոյթների) հանդէպ անփոյթ, ինչ-որ տեղ քամահրական վերաբերմունք: Այդ պատճառով է, որ նրա չափածոյ մտածողութեան խորքում առկայ եւ գնահատելի հոգեւոր երակը կեանքային իրողութիւնների տակ խամրած է, քնարական հերոսի ես-ը յայտնուած անտարբերութեան եւ անորոշութեան երկուստեան մէջ:

Անունները շատ են, Լոյս Գունտաքճեան, Էլենա Մասեհեան, Անա Արզումանեան եւ ուրիշներ, բոլորին առանձին անդրադառնալը չէ մեր նպատակը:

ՆՈՐ ԳՐՔԵՐ

«ՍԻՐՈՒԱԾ ԴԵՍՔԵՐ, ԳԻՐՔԵՐ ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ»

Ն. ՏԵՐԵԱՆ

Լոյս է տեսել վաստակաշատ կրթական մշակ, հպարակագիր եւ հրատարակախօս ազգային, քաղաքական գործիչ Երուանդ Պապայեանի «Սիրուած Դէմքեր, Գիրքեր, Իրագործումներ եւ այլն» լայնածաւալ հատորը, 384 էջերից բաղկացած: Սոյն հետաքրքրական եւ արժէքաւոր հատորը հեղինակի 7րդ հրատարակած գիրքն է, որ լայն ընդունելութեան արժանացաւ ընթերցողների կողմից:

Երուանդ Պապայեանը ծանօթ դէմք է մեր իրականութեան մէջ եւ բազմիցս անգամներ գնահատուած է գնազան կազմակերպութիւնների կողմից ձեռնարկուած գրական երեկոներով, շնորհանդէսներով եւ պարգևատրուած է պատուոգրերով եւ մետալներով: Վաստակաւոր մտաւորականի գիրքերը ըստ հեղինակի լոյս են տեսել իր երախտագէտ գաւակների կողմից: Գրքի նախաբանը պատկանում է վաստակաշատ գրական եւ կրթական գործիչ, Ա. Հ. Գրողների Միութեան նախագահ Թորգոմ Փօստաճեանի

գրչին, որն սեղմ տողերի մէջ ներկայացնում է հեղինակի ազգային, հասարակական եւ կրթական ասպարէզներում ունեցած դերը, Սուրիա, Լիբանան եւ Ա.Մ. Նահանգներ: Երուանդ Պապայեանը ամենայն վարպետութեամբ անդրադառնում է 20րդ դարի հայ իրականութեան մէջ մի շարք գրողների, մանկավարժների, ազգային, հասարակական գործիչների, բարերարների դերին, որոնց մէկ կարեւոր մասին ճանաչել է անձամբ:

Հատորի մէջ ամփոփուած են նաեւ իր հանդիպումները, տպաւորութիւնները, ազգային կեանքում տեղի ունեցած կարեւոր երեւոյթները, իրադարձութիւնները: Դրանք կարդացուած են ամենայն հետաքրքրութեամբ: Բազմաբովանդակ, արժէքաւոր եւ պատմական, այս հատորի գրախօսելը թողնելով մեր մասնագէտ գրական տեսաբաններին, ի սրտէ շնորհաւորում ենք մեծ ճանաչում ունեցող Երուանդ Պապայեանի սոյն հատորի լոյս ընծայումը: Մաղթում ենք հաստակաշատ հեղինակին անսպառ ուժ, եռանդ, առողջութիւն եւ երկար կեանք:

Արձակի բաժնում եւս մի շարք անուններ յիշատակելի են. Վրէժ-Արմէն Արթինեանը Գանատահայ, ազգային-հասարակական բեղուն գործունէութիւն է ծաւալում: Մասնագիտութեամբ ճարտարապետ, պաշտօնավարել է բազմաթիւ գրասենեակներում, Գանատայի 2 նախարարութիւններում, բազմազան նախագծերի հեղինակ: Ընդգծուած գրական ունակութիւններ նոյնպէս ունի, յատուկ կապուածութիւն Հայաստանի հետ: «Հորիզոն» տեղի շաբաթաթերթի ակունքներում է կանգնած հիմնադրման օրից, տասը տարի շաբաթաթերթի խմբագրութիւնն է վարել, մինչեւ 2009 թուականը գրական յաւելուածը: Նախընտրած գրական ժանրը ուղեգրութիւնյուշագրութիւնն է: Տպագրել է բազմաթիւ ժողովածուներ «Ոս-

տայն-1», «Ոստայն-2», «Ոստայն-3» եւ այլ, որոնցում հայն ու հայկականը մշտապէս ներկայ են: Տարեգիրքում նա ներկայացուած է «Կուռնիներ» էսսեով:

Սփիւռքում յայտնի անուն է Սարգիս Վահագնը (ԱՄՆ), սերտօրէն կապուած ծննդավայրի Պէյրուսթի գրական մամուլին, իր գործօն մասնակցութեամբ տեղի գրական շրջանակին: Հեղինակ է բազմաթիւ պատմուածքների («Արմատներ», «Նայիրեան մորմոք», «Տագնապը»), թատերգութիւնների, էսսեների: Լոս Անճելըսում 2004-ին լոյս տեսած «Արշիլ Կորգի» վէպը ընթերցողական լայն ընդունելութիւն եւ արձագանք ունեցաւ. արժանացաւ նաեւ 2 մրցանակների «Վահան Թէքէեան» եւ

Շարք էջ 19

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու և մանուկներու Քայքայութեան բաժնում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոդանային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վնասի հետեանքով պատճառած
վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՎԻԵՆՆԱԿԱՆ ՄԻՒԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԶԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

Մխիթար Աբբասյան մասնակց (1749) վերջ, անոր յաջորդ Հ. Ստեփանոս Մելքոնեան Աբբասյան ժամանակ, Մխիթարեան Միաբանության մէջ բաժանումը մը յառաջացաւ (1773): Պատճառը վանական կեանքի սահմանադրական հարցեր էին: Բաժանումը տեղի ունեցաւ ոչ միայն Վենետիկի Մայր վանքի, այլ նաեւ այլ վանատուններուն մէջ, այնպէս որ Միաբանութիւնը գրեթէ երկու հաւասար մասերու բաժնուեցաւ:

Վենետիկէն հեռացողները հաստատուեցան անկէ ոչ հեռու Թրիեստ քաղաքը, որ այդ ժամանակ մաս կը կազմէր աւստրիական կայսրութեան: Մարիա Թերեզիա կայսրուհին յատուկ արտօնագրով մը մեծ դիւրութիւններ տուաւ Մխիթարեան Հայրերուն Թրիեստ հաստատուելու: Այդտեղ բացուեցաւ նաեւ Մխիթարեան առաջին տպարանը (1776):

1805-ին Թրիեստ անցաւ ֆրանսական տիրապետութեան տակ: Մխիթարեան Հայրերը մասնուեցան նիւթական տազնապի եւ 1810-ի դեկտեմբերին ստիպուեցան ամէն ինչ լքել եւ փախչիլ կայսրութեան մայրաքաղաքը՝ Վիեննա: Ֆրանց Ա. կայսրը վերանորոգեց Մարիա Թերեզիայի տուած արտօնագիրը եւ Մխիթարեան Հայրերը հաստատուեցան Վիեննայի մէջ, Քափուչիններու լքուած մէկ վանքը, գոր յետոյ (1837-38) հիմնովին քանդելով՝ կառուցեցին հոյակապ նոր շէնքը:

Մխիթարեան երկու Միաբանութիւններն ալ՝ Վենետիկի եւ Վիեննայի, ունենալով նոյն հիմնադիրն ու նոյն նպատակը՝ նոյն գաղափարականով նուիրուեցան իրենց հոգեւոր, մշակութային եւ դաստիարակչական առաքելու-

թեան: Մխիթարեան Միաբանութեան բաժանումը թերեւս հայ պատմութեան մէջ միակն էր, որ ունեցաւ նաեւ իր դերական արդիւնքները: Բացի օգտակար մրցակցութենէն, գլխաւորաբար իտալական եւ գերմանական տարբեր մշակութիւններու ազդեցութիւնն էր, որ հարստացուց միաբանութեան գործունէութիւնը: Մինչ Վենետիկի Մխիթարեաններու քով գարգացաւ արուեստի սէրը, Վիեննայի միաբանները հայագիտութեան մէջ օգտագործեցին գերմանական քննական ոգին:

Վերջապէս 10 տարի առաջ, աւելի քան 200 տարուան բաժանումէ վերջ, երկու միաբանութիւնները նորէն միացան՝ միացեալ ոչ թերով շարունակելու իրենց ժառանգած առաքելութիւնը: Այդ միութիւնը իրականացնելու համար երկու ընդհանրական Աբբասայրերը եւ երկու ընդհանրական վարչութիւնները հրաժարեցան եւ ընտրուեցաւ մէկ ընդհ. Աբբասայր եւ մէկ ընդհ. վարչութիւն: Վենետիկը եղաւ միացեալ միաբանութեան գլխաւոր կեդրոնը եւ նստավայրը ընդհ. Աբբասայր, իսկ Վիեննան միաբանութեանս երկրորդ կեդրոնը, որուն համար ընտրուեցաւ տեղական Աբբասայր մը: Վիեննայի նախկին մասնաճիւղերը կապուեցան առաջին կեդրոնին:

Միութիւնը անշուշտ ունեցաւ սկզբնական անորոշութիւններ, նաեւ սխալներ. բայց յուսով ենք, որ ժամանակը կը հարթէ դժուարութիւնները եւ մասնաւոր երիտասարդ նոր ուժերով Միաբանութիւնս աւելի մեծ թափով կը շարունակէ իր նուիրական առաքելութիւնը:

BAKU.AM ԵՌԱԼԵԶՈՒ ԿԱՅՔԷԶ. ԻՐԱՅԱՏՈՒԿ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՊԱՔՈՒԻ ԶԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԶՈՐԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտը ներկայացնում է Պաքու քաղաքի հայ համայնքի հասարակական, մշակութային եւ գործարար կեանքը լուսաբանող իր բնոյթով եզակի եռալեզու կայքէջը՝ baku.am: Կայքէջում գետեղուած հարիւրաւոր լուսանկարներն ու փոստային բացիկները լուսաբանում են հայկական ընտանիքների, հայապատկան շէնքերի, Պաքուում լոյս տեսած հայկական մամուլի, գրահրատարակչութեան, գովազդային յայտարարութիւնների եւ, ընդհանրապէս Պաքու քաղաքում հայկական երբեմնի մշակութային ներկայութեան պատմութիւնը:

Առանձին բաժնով ներկայացուած է Պաքու քաղաքում 1905, 1918, 1990 թուականներին տեղի ունեցած հայկական կոտորածները լուսաբանող փաստաթղթեր եւ լուսանկարներ:

Պաքուի հայ համայնքը դարձաւ ատրպէյճանական եւ թրքական իշխանութիւնների ծրագրած եւ երեք փուլով իրագործած ցեղասպանութեան գոհ:

Դրա արդիւնքում դադարեց գոյութիւն ունենալ քաղաքի զարգացման պատմութեան մէջ ահռելի ներդրում կատարած հայկական տարրը:

20-րդ դարի սկզբին Պաքուն, հանդիսանալով Ռուսական կայսրութեան անդրկովկասեան տիրոջ թի խոշորագոյն արդիւնաբերական կենտրոն, ունէր հարուստ հայկական քաղաքակրթական ներկայութիւն: Հայերը կազմում էին քաղաքի երրորդ խոշոր էթնիկ խումբը՝ ռուսներից եւ բազմացեղ մահմեդական բնակչութիւնից յետոյ: Այդուհանդերձ, հայերն առաջնային տեղ էին զբաղեցնում քաղաքի հասարակական, մշակութային եւ գործարար կեանքում: Հենց հայ գործարարներ-



րի շնորհիւ սկսուեց եւ մեծ թափ առաւ Պաքուի նաւթարդիւնաբերութիւնը:

Հայ գործարարների միջոցներով եւ հայ ճարտարապետների նախագծերով ու եւրոպական ճարտարապետական լաւագոյն աւանդութիւններով կառուցած շէնքերը մինչ օրս զարդարում են Ատրպէյճանի մայրաքաղաք Պաքուն: Ատրպէյճանի ներկայիս իշխանութիւնները որդեգրած հակահայ քաղաքականութիւնը չի հանդուրժում որեւէ յիշատակում Պաքուում հայերի երբեմնի ներկայութեան ու քաղաքի պատմութեան մէջ նրանց թողած հարուստ մշակութային ժառանգութեան մասին:

Այս կայքէջի պատրաստումը իւրաքանչիւր յարգանքի տուրք է Ատրպէյճանի պետական այլասեացութեանը եւ հրահրուած ջարդերին գոհ գնացած Պաքուի հայերի յիշատակին:

AMERICAN RELIABLE WINDOWS

www.americanreliablewindows.com

Beautify while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Clad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW.
Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250
Your Satisfaction is Guaranteed.

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

\$89 Rebate*
toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
5 windows = \$445
10 windows = \$890
15 windows = \$1335

Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒՂԵՂԻ ԽՈՐՔՈՒՄ

Ջեյմսի Կլոուզեր

Գիտությունը բացառապես է տարբեր կենդանիների սրամտությունների չափը: Այդ ուսումնասիրությունների ընթացքում մի նոր հարց է առաջանում, թե՛ իւրաքանչիւր կենդանու հետ ինչպէ՞ս պիտի վարուել:

Ոչ շատ հեռու անցեալում առաջադրանքներ ստեղծ էին իմուսի Բանգիի հետ, դա իմ ցանկությունները էջեր, քանի որ Բանգիին էր ինձ հրաշքեր, դա նրա միտքն էր, ըստ իր սովորությունների, արագ կերպով կատարեց իր ցանկությունները:

Բանգիին մի կապիկ է, որ կարող է մի քանի բառեր արտաստել, որից 384-ը կանոնաւոր կերպով է ասում: Հաւանական է, որ նա մի դիւրին աւելի բառեր էլ իմանայ: Նա մի սքանչելի եւ շատ բարձր տոնով ձայն ունի, բայց նա անկարող է նախադասություններ կազմել:

Նա նմանում է բոնոբո տեսակի կապիկին, որն ամեննալաւ ու խաղաղ բնաւորութեամբ կապիկներից է եւ շիմպանզէի հօրեղբոր տղան է համարում:

Բայց Բանգիին ընթերցասէր եւ գրուցասէր մի կապիկ է: Նա օրուայ ընթացքում յաճախ վերցնում է բառարանը, որը պատրաստուել է գլաջիալ փայլուն ու հաստ թղթերից, որը մի մասնագիտական բառարան է եւ զարդարած է հարիւրաւոր գունաւոր առանձին նշաններով. դրանք համարեա ամբողջ իրերը նաեւ առօրեայ խօսակցութեան բառերն են ցուցադրում: Բանգիին եւ իր նմանները այդ ցուցատախտակները վրայի նկարները ցոյց տալով կարողանում են այդպիսով իրենց ցանկությունները արտայայտել: Նրանք սովորում են մտածել եւ նախադասություններ կազմել, նոյնիսկ բոլոր նշանների միջոցով կարողանում են միացնել ցանկացած բառեր եւ այդպիսով յայտնել իրենց միտքն ու ցանկությունները:

Այդ ցուցատախտակները միայն հեշտ անուններով եւ իմաստով գործածական նշաններ չեն, ինչպէս օրինակի համար «գնդակ» կամ «ժէլէ» (դոնդոդ), դրանց մէջ կան նաեւ գաղափարներ, հասկացություններ, օրինակ ասենք՝ «մեկնել երեւանից դէպի Սեւան», կամ քերականական իմաստով տարբերւող բառեր, օրինակի համար՝ անգլերէն ing կամ ed վերջաւորությունները, որ առաջինը մի ակտի կատարման ընթացքն է ցուցադրում եւ երկրորդը՝ ակտի անցեալ ժամանակն է: Բանգիին գիտի սառուց կտորատելու կարեւորությունը: Մի գործնական ժողովին, գործը սկսելուց առաջ նա լաւ գիտի, թէ այդ աշխատանքը կատարելով նա արժանանում է գնահատանքի: Նա իր պատկերագրող բառարանից օգտուելով ցոյց է տալիս սուրճի բաժակի նկարը այնուհետ նա ինձ մատով ցոյց է տալիս եւ թափով լայն բացած իր թեւերով գրկում է իր դաստիարակին՝ Սու Սաւէջ Ռամբօին (Su Savage Rumbogi), որը կապիկներին սիրող մասնագէտ ու հետախոյզ է, եւ անդամակցում է կապիկների ուսումնասիրման հիմնադրամի կենտրոնին: Դէս Մոյնըզ (Desmoines) հետախուզական կենտրոնը, Այովա վայում, Բանգիին տանում է հաստատությունների շէնքը: Տարալուծարանի տնօրէնը Թէյլըր Ռօմին 4 բաժակ սուրճ է պատկերում՝ ոչ

տաք, դրանցից մէկը հրամցնում է Քանգիին: Նա ներքնաբակում էր, միացաւ մեզ եւ մօտեցաւ սեղանին եւ ճաշակեց սուրճը եւ դրանից յետոյ մի մեծ կոճիկ էր խնայաբար խօսակցութիւնը ձայնագրում էր միկրոֆոնով եւ նա լսում էր մեր խօսքերը: Մենք նրան ասացինք, որ մի այցելու պիտի գայ մեզ մօտ: Սու Սաւէջ Ռամբօն՝ դաստիարակը, ինձ ասաց, թէ Քանգին այդ լուրը լսելով ոգեւորուեց, բայց այդ առաջադրանքն նա դարձել էր մի կամակոր կենդանի եւ մենք չկարողացանք նրան համոզել, որ գայ բակ եւ միանայ մեզ: Որոշեցինք նրա հետ բանակցել եւ նրան սիրաշահել մի կտոր քաղցր սեխով, որը դեռեւս նրա գրքի պատկերներում չկար: Նա իր ցուցատախտակներից օգտուեց եւ, ցոյց տալով կանանչ ու դեղին մի բոյս եւ մի ձմերուկ, գանգրակադամբն էլ նրա հետաքրքրութիւնը գրաւեց, իսկ կաթնակովին էլ հետաքրքրութիւն ցոյց տալով, նա գիտէր եւ փորձն ունէր, որ կաթնակովը կարող էր աւելի երկար ծամել:

Մեծ կապիկների ուսումնասիրութեան կենտրոնը ոչ շահադիտական մի կազմակերպութիւն է: Այդ կենտրոնում պահուած են 7 մեծ կապիկներ, որ ինչպէս նաեւ Քանգին եւ իր փոքրիկ տղան՝ Թէքօն, որը ծնւել է այս տարի Յունիս ամսի մէկին: Չի կարելի ասել, որ Բանգիին առաջին կապիկն է, որ մտածելու եւ խօսելու կարողութիւն ունի: Օրինակ՝ յայտնի Բոքօն, Վաչօն եւ ուրիշները Բանգիից աւելի առաջ էին եկել: Բայց հիմնադրամի ուսումնասիրութեան կենտրոնում մի նոր երեւոյթ էլ յայտնի դարձաւ, որ կապիկները ծնունդ առնելուց յետոյ սկսում են ծանօթանալ իրենց սիմուլիկ խօսակցութեան հետ՝ մարդկանց նման, որ մայրը խօսում է իր երեխայի հետ, նրանք բացատրում են նոյնիսկ երեխայի հասկացողութիւնից դուրս՝ իրենց տեսակների մասին: Հիմնադրամի ուսումնասիրությունների կենտրոնում գիտնականները պատմում են կապիկների կեանքի մասին, աշխատում են եւ ուսումնասիրութիւններ են կատարում ու կապիկներին սովորեցնում են յարաբերուել աւելի լաւ ու արագ կերպով եւ մեծ ու դժուար բառեր սովորել, որ երեխաները ծանօթանան իրենց խօսակցութեանը:

Այսօր ամէն ինչ նոյնն է, Բանգիին չի հետաքրքրում շատ խօսելով, նա գերադասում է վազել ու ցատկոտել, ցուցադրելով իր ֆիզիկական կարողութիւններն ու շարժումները: Գնդակի հետ խաղալու փոխարէն, նա սուրճ է խմում եւ յետոյ իրեն զբաղեցնում է իր գրքի գունաւոր նկարներով: Նա առանձնացնում է մի քանի պատկերագրող էջեր, նաեւ սկսում է դրանց նայել ու շարժութեամբ: Մի խօսքով նա զբաղւում է ընթերցանութեամբ եւ երբեմն մատնանշում է որեւէ մի նկար ու իր դաստիարակչուհուն ցոյց է տալիս իր գրքից առանձնացած նկարները: Նա դաստիարակչուհուն ցոյց տուեց մի գնդակի նկար եւ դաստիարակչուհին ասաց, ես կաշխատեմ կարճ ժամանակում նրա համար մի գնդակ գտնել: Բանգիին մի բառով նրան պատասխանեց (get այսինքն՝ ձեռք բեր)»: Կարճ ժամանակում շէնքի գրասենեակներից մէկում, նա գտաւ մի գնդակ: Երբ նա վերադարձաւ

Բանգիի մօտ դաստիարակչուհին (Սաւէջ Ռամբօնը) հարց տուեց Բանգիին, թէ նա պատրաստ է գնդակով խաղալ, եւ ոչ շատ ուրախ նա պատասխանեց՝ դրա ժամանակն արդէն անցել է:

Մարդկութիւնը լայն յարաբերութիւն ունի կենդանիների հետ: Նրանք մեր ընկերները, մեր շարժական ունեցւածքը ու նաեւ մեր ընտանիքների անդամներն են համարում: Կենդանիները կարող են լինել մեր տների պահակը եւ մենք նրանց շատ ենք սիրում, բայց դժբախտաբար մենք դրանց պահում ենք վանդակներում եւ հիանում դրանցով: Որոշ ժամանակներ էլ շարաշահում ենք նրանց եւ օգտուում ենք նրանց մսից, եփում եւ ուտում ենք:

Մարդը միակ արարածն է, որ գործիքներ է բանեցնում, բայց թռչունները եւ կապիկներն էլ այդ գործի ընդունակութիւնն ունեն: Մարդը միակն է, որ ցաւակցում է միւս մարդկանց եւ մեծահոգի է, բայց ի՞նչ կասէք կապիկների մասին, որ բարեգործութիւն են անում, փղերի մասին, որ սգում են իրենց մեռածների համար: Մարդը միակն է, որ ունի ուրախութեան եւ ապագայի հանդէպ գիտակցութեան զգացում:

Իսկ այժմ անդրադառնանք վերջին ուսումնասիրութիւններին, որոնք կատարուել են Մեծն Բրիտանիայում, որի արդիւնքում պարզուում է, որ խոզերը, որոնք ապրում եւ աճում են խաղաղ միջավայրում, լաւատեսութիւն են ցուցադրում ու յուսալի շարժումներ են կատարում, եւ նոր ձայներ լսելիս, փոխանակ զգուշանալու եւ յետ նահանջելու, աւելի ուրախանում եւ ոգեւորւում են: Եթէ ասենք թէ միայն մարդն է, որ կարողանում է խօսել, Բանգիին կարող է ձեզ ասել, որ դա ճիշտ է:

Այս բոլորը մեզ թելադրում է, որպէսզի նոր տեսլանքի հիմամբ յանգենք նոր մտքերի եւ մի նոր հայեացքով նայենք կենդանիներին: Փիթըր Սինգերի 1975 թվականի «Animal Liberation bioethicist» գիրքը, որը հրատարակուել է "Փրինչէյըն" համալսարանում յայտնում է թէ պիտի ծանօթանանք կենդանիների իրաւունքների շարժմանը: Մենք իրաւունք չունենք կենդանիներին վախեցնել կամ ցաւ պատճառել: Չնայած, որ այս կարծիքը թէեւ երբեք չի ընդունուի մեր աշխարհում, բայց նոր ուսումնասիրութիւնները այնպիսի ապացոյցներ են ի յայտ բերում, որ միջին հիւսն աննկատ են մնացել:

Գիտնականները ներկայումս ասում են, թէ միայն կենդանիների ուղեղի ուսումնասիրութիւնը իրենց չի բաւարարում, այլ նրանք ցանկանում են իմանալ նրանց մտքերն ու մտածողութիւնը: Դրան հասնելու համար, մեր ճամփին շատ արգելքներ կան յատկապէս կենդանիների սրամտութեան վերաբերեալ: Առաջին հերթին մենք միջին անգամ չենք համաձայնուի այդ մտքի հետ, որ ոչ մարդկային տեսակները նոյնպէս գիտակից են:

ԳԻՏԱԿԻՑ...

Մենք ընդունում ենք շիմպանզէի եւ դելֆինների հետ ունեցած փորձառութիւնները՝ նրանց գիտակցութեան վերաբերեալ. մենք սիրում ենք մտածել շներին եւ կատուների վարքերի մասին, բայց ինչու չենք մտածում մկների եւ կոկորդիլոսների, նաեւ ճանճերի մասին, ու նման մի պարզ ու բարակ ուղեղով միջատի մասին,

որի ուղեղի կարողութիւնը միայն բաւարարում է միջատի մարմինը կազմակերպելու ու հսկելու:

Թէ որտեղ պէտք է այդ գիծը գծել՝ դա անհնարին է ասել, միջին անգամ պահ, երբ մեր դատողութիւնը յատակ չէ, քանի որ մեր տեսակէտները տարբեր տեսակի կենդանիների հանդէպ արտայայտում ենք մեր զգացումներով: Մի ուստի՞ (ճուշտ) հաւանական է, որ մի թիթեռից աւելի պակաս խելք չունենայ, բայց մենք անմիջապէս հերքում ենք գիտակցութեան փաստերը, այդ պատճառով, որը նրան չենք սիրում:

Ներկայիս գիտնականների մեծամասնութիւնը համաձայն են այն մտքի հետ, որ գիտակցութիւնը կարգաւորում է մի տեսակ իմացական ռեսուրսի միջոցով, որն աշխուժ բոցկլում է մարդու եւ մի շարք այլ կենդանիների մէջ, իսկ խամրում եւ վերջնականապէս մարում է ստորադաս տեսակներում: Դա մի տեսակ յամառութիւն կը լինի, եթէ մենք անտեսենք եւ հերքենք կաթնասուն կենդանիների գիտակցութիւնը:

«Անհետեւ կը լինի եթէ կաթնասունների մօտ գիտակցութեան առկայութիւնը հերքենք», ասում է Հարալդ համալսարանի հոգեբան, «Stuff of thought» գրքի հեղինակ Սթիւեն Փինքերը: "Թռչունները եւ միւս ողնաշարաւորները եւս անշուշտ գիտակից են: Սակայն երբ խօսքը հասնում է ոսորէին եւ սարդին, այնքան էլ չի լինի պնդել, որ նրանք էլ են գիտակից (աւելի խախուտ գետնի վրայ ենք կանգնած գտնում մեզ):

Կենդանիների խելքն ու ինտելեկտը ուսումնասիրելիս՝ ըստ նրանց ուղեղի չափի, նկատելի է, մարդը այդ հարցում ամենաբարձր մակարդակի վրայ է գտնուում: Մարդու ուղեղը խոշոր է եւ նրա քաշը 1,400 կգ, որը հաւասար է 3 փոնդի (Ամէն մի փոնդը 453 գրամ է: Լ.Ա.), բայց դելֆինի ուղեղի քաշը 1,700 կգ է, որը 3.75 փոնդ է: Վայրի յարձակող կետերի ուղեղը 5,600 կգ, այսինքն՝ 12.3 փոնդ, է, որը հսկայական ծաւալ է: Պարզուում է մարդու գլխուղեղը դելֆինի ուղեղից աւելի փոքր է, եւ շատ փոքր է քան այլ կենդանիների ուղեղը, բայց երբ մենք ուսումնասիրում ենք կետերի ընդհանուր մարմնի չափերը վերադառնում ենք նորից առաջին տեղում:

Մի փոքրիկ կենդանի, որը մկան ընտանիքից է եւ կոչւում է Etruscom Shrem, ուղեղի կշիռը 0.1 գրամ է: Եթէ նրա մարմնի եւ ուղեղի կշիռը չափենք եւ համեմատենք մի մարդու հետ, կը տեսնենք, որ նրա ուղեղի չափն ու մարմնի կշիռը աւելի մեծ է քան մարդունը: Անկասկած, ուղեղի մեծութիւնը ուղիղ յարաբերութեան մէջ է կենդանու սրամտութեան հետ, ուղեղի կազմուածքը շատ կարեւոր է գիտությունների համար:

Կաթնասուն կենդանիները անւանւում են Carebrad corten, որոնք ունենալով մեծ ու բարդ կազմուածքով ուղեղ աւելի խելամիտ կենդանիներ են: Սակայն դրանով հարցը չի փակուում: Ստեղծագործ աշխատանքի տեսակէտից եւս տարբերում են կենդանիները, օրինակի համար այդ ուղեղութեամբ մարդը գործիքների օգտագործման միջոցով անհասարակ իրաւունքներ է կատարում: Կապիկները ուրիշ կենդանիների համեմատութեամբ իրենց կարիքները հոգալու համար կրկնա-

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒՂԵՂԻ ԽՈՐՔՈՒՄ

Շարունակուած էջ 16-էն

կի անգամ աւելի շատ են օգտագործուած գործիքներ, իսկ որոշներն էլ կան որ այդ առումով մասնագէտ են: Նրանք կարող են իրենց ուսելիքը քարով ջարդել, որպէսզի միջուկը հանգիստ ուտեն: Չնայած որ այդ քարով կտորելը հասարակ գործ է, բայց դա կատարելու համար նրա ուղեղի Carebrad corten-ն է գործում: Հարց է առաջանում թէ ինչու ազուաւր եւ նրա նման մի քանի այլ թռչուններ աւելի լաւ գործիք բանեցնող են, քան թէ միւս կենդանիները. օրինակի համար՝ ազուաւր փաստել է, որ կարող է երկաթէ լարը ծռել, որպէսզի դրանով կարողանայ ուտելիքի տուրքակը բարձրացնել:

Հետաքրքիր է նաեւ մի այլ փաստ, որն անցեալ տարի արձանագրուել է Քեմբրիջ համալսարանի մի կենդանաբանի կողմից. մի թռչուն, որը ազուաւր ընտանիքից է եւ Քրիստոֆեր է կոչուում, իր խմելու ջուրն ապահովելու համար, առուակի մէջ քար է լցնում, որ ջրի մակարդակը բարձրացնի եւ օգտուի այդ ջրից: Այդ հարցում հետաքրքիրն այն է, որ այդ թռչունները աշխատում են աւելի մեծ քարեր գտնել ու զցել, որ աւելի շուտ իրենց նպատակին հասնեն:

Այս մասին արձանագրութիւններ կան դեռ շատ հին ժամանակներից՝ մօտաւորապէս 2500 տարի առաջ: Ըստ պատմաբանների առասպելական պատմութիւնները վկայում են այդ թռչունների կատարած աշխատանքների մասին, իսկ այսօր՝ 21-րդ դարում, գիտնականները հետազօտում եւ փաստում են, որ այդ հին պատմութիւնները առասպել չեն, դրանք իրականութիւն են ունեցել: Գիտնականները ուսումնասիրելով եկել են այն եզրակացութեան, որ թռչունները կարողանում են այդ կարգի մտածած, ծրարած աշխատանք կատարել:

Գիտնականները, ուսումնասիրելով այդ թռչունների կատարած աշխատանքը, ենթադրում են, որ այդ աստիճան գարգացած մի շարք թռչունների ուղեղում բացակայում է ուղեղի կեղեւը Carebrad corten-ը, եւ իրենց ուղեղի այդ կառուցով բաժանուած են կաթնասուն կենդանիներից: Նրանց ուղեղը կազմուել է մի շարք երկար թելանման կառուցներից:

Այս տարակ սկզբում, մի աշխատարկումը՝ M.I.T. եւ Երուսաղէմի Հիբրեւ (Hebrew) համալսարաններից յայտնաբերել են, թէ իւրաքանչիւր բջիջ, որը գտնուում է կաթնասուն կենդանու ուղեղի փոքր բաժնում ունի իր իւրայատուկ ու մասնաւոր աշխատանքը, եւ դա չի տարբերում թռչունների ուղեղի հետ, որ նրանք էլ կարողանում են կատարել միատեղ բոլոր այդ աշխատանքները, բայց արդիւնքը նոյնն է, տեղեկութիւնները շարունակուած է եւ յայտնաբերուած է թէ թռչունները աւելի կատարեալ կերպով են կատարում:

Ազուաւրների եւ ուրիշ կենդանիների պարագային հետաքրքիր է նաեւ այն, որ նրանց կարելի է ուսումնասիրել ոչ թէ միայն ուղեղի գործունէութեան տեսակէտից առանձնաբար, այլեւ՝ հասարակութեան մէջ: Շատ հեշտ է լինել առանձին ու մենակ մի կենդանի, քան թէ հասարակական (social): Երբ նա՝ բեւեռային արջի նման,

մենակ որսում ու ուտում է, նա կարիք չունի իր հօգուածները ցուցադրելու, եւ կուռելիս կամ էլ հէնց որս անելիս ուրիշ կենդանիների հետ համագործակցելու:

Անդրադառնանք գազանների թագաւորին՝ առիւծին: «Նա կատարում է շատ հանդարտ կերպով», - ասում է կենդանաբան Քրիստին Դրէնը՝ «Դիւք» համալսարանից. «Մի կենդանի (նպատակը մի առիւծ է) յարձակողական դիրք է ընդունում, իսկ մի ուրիշը որսին մղում է այն ուղղութեամբ, ուր միւս առիւծը սպասում է նրան: Աւելի տպաւորիչը այն է, որ խղճուկ տեսքով բորենին մենակ կարող է որսալ մի վայրի կով, որը կոչոււմ է վայլղբիստ (wildebeest), բայց մի զբերա որսալու համար պիտի խմբով յարձակուեն: Նրանք խմբի կազմը դասաւորում են ըստ իրենց ցանկացած որսի: Իրականութեան մէջ, նրանք իրար ասում են՝ գնանք մի զբերա որսալ, այդ դէպքում, նրանք եթէ իրենց ճամբին մի վայրի կով էլ տեսնեն, նրան շրջապատում են ու չեն որսում:

Անցեալ տարի Դրինը դեկավարեց բորենիների ուսումնասիրման ծրագիրը, որպէսզի պարզեն թէ այդ կենդանիները ինչքանով են համագործակցում իրար հետ: Նա ընտրեց մի գոյգ բորենիների եւ դրանց փակեց մի գոմում եւ ամէն մէկի համար պարանով ուտելիքներ կախեց առաստաղից: Այնպէս էր դասաւորել, որ դրանցից իւրաքանչիւրը առանձին չէր կարող իր ուտելիքը վերցնել եւ պէտք է երկուսն էլ միատեղ եւ միաժամանակ առաստաղից կախած պարանները քաշէին: Դրինը ասում է, թէ՛ երկու ըստ չանցած, նրանք երկու պարաններից էլ ուտելիքներ իջեցրին եւ սկսեցին ուտել, դրանից եւ նրանց այդ վարքից իմ բերանը զարմանքից բաց մնաց:

Այդ կարգի կենդանիների վերաբերեալ դեռեւս չի պարզուել թէ ինչ պատճառով եւ ինչքանով են համագործակցում: Այդ կենդանիների համատեղ ապրելն է պաճառ դառնում, որ նրանց ինչքը զարգանայ թէ՛ ինչքն է, որ հեշտացնում է նրանց ապրելը:

Դա հաստատ է, որ ազուաւրները եւ մի շարք այլ թռչուններ ամենագարգացած հասարակական կենսա վարող թռչուններն են: Նրանք երկարատեւ եւ կայուն խմբային կապեր ունեն եւ միակ թռչուններն են, որ փաստում են շատ հմուտ են:

Եւ եւ օտարները

Շատ հեշտ է ուսումնասիրել կենդանիների ուղեղը եւ նրանց վարուցեղութիւնը, բայց մի նուրբ իմացական կարողութեան հարց կայ, որ ծրագրումը դժուարացնում է: Մարդու համար ամէնից շատ կարեւոր հարցն այն է, որ երեխաները սովորեն: Այդ նշանակում է մտքի տեսութիւն: Դրա իմաստը այն է, որ գիտելիքները ամբողջական չեն: Մի նորելուկ երեխայ նայում է իր դպրակի ձեռքին, որ մի խաղալիք է թաքցնում սենեակի անկիւնում, եւ նա քայլում է ու գիտէ թէ, ո՞ր մասում է խաղալիքը թաքնուած: 3 տարեկան երեխան արդէն գիտակցում է, որ ինքը իմանում է այդ, բայց դա չի նշանակում, որ ուրիշներն էլ գիտեն:

Մտքի տեսութիւնը կենտրոնացած է տեղեկութիւնների փո-

խարկման եւ ինքնագարգացման վրայ, եւ փոքրաթիւ կենդանիներ կան, որ դրա ցուցադրման կարողութիւնն ունեն: Չնայած որոշ կենդանիներ, օրինակ՝ շները, գիտակցում են թէ ինչ է նշանակում մատով մի բան ցոյց տալը:

Մեծ կապիկները դրանով հանդերձ որ խելացի են եւ ունեն հինգ մատանի ձեռքեր, գուրկ են մատով ցոյց տալու նշանակութիւնը հասկանալու ունակութիւնից: Բայց դա կարող է այն պատճառով լինել, որ նման գործի ասպարէզը չունեն: Մի կապիկի ձագ շատ հագուադէպ է իր մօրից հեռանում. նա անընդհատ կախուած է մօրից ու չի բաժանում նրանից: Բայց Քանգին, որ մեծացել է գերութեան մէջ, յաճախ ձեռքերն ազատ է եղել յարաբերութիւն հաստատելու համար:

Երբ Քանգին 9 ամսական էր, արդէն նա մատով ցոյց էր տալիս իր ուզածը. - ասում է Սաւէջ Ռամբօն: Դրան են ականատես եղայ Այովա քաղաքում, ուր նա մատով ցոյց էր տալիս եւ հրաւիրում էր սուրճ խմելու, եւ նոյնիսկ, երբ բարձրացնում էր իր ձեռքերը եւ ուղեկցում էր դէպի միջանցքի դուռը, շատ արագ կերպով իր ձեռքի շարժումով ինձ էլ հասկացնում էր, որ իր գնդակը տանէի:

Մատով ցոյց տալը կենդանիների խելամտութեան միակ նշանը չէ: Blue Jays-ը մի տեսակ կապտագոյն թռչուններ են, որոնք իրենց ցանկացած մթերքները մաքրագործում են, այդ կատարում է ուրիշ կենդանիների ներկայութեամբ, որոնք դրա վկան են դառնում: Այդ թռչունները հաւաքած մթերքները թաքցում են իրենց գաղտնի պահեստում: Եթէ թռչունների այդ գործի ընթացքում նրանց նայող լինի, նրանք դադարեցնում են իրենց աշխատանքը, եւ երբ օտար կենդանիները հեռանում են, նորից սկսում են իրենց աշխատանքը՝ մթերքների փոխադրումը պահեստների մէջ: Նրանք ոչ միայն հասկանում են, որ ուրիշներն էլ խելքի տէր են, այլ վարպետօրէն գիտեն՝ իրենց հաւաքած սննդամթերքի միջի բովանդակութիւնը:

Այսպէս կոչուած հայելու թէսթը՝ իրեն իր պատկերից զանազանելու ոսկեայ չափանիշն է: Հարցն այս է, որ արդեօք կենդանին կարող է տեսել իր արտացոլած պատկերը եւ հասկանալ այն ինչ է թէ ոչ: Չարմանալի է թէ ինչպէս կատուն, երբ տեսնում է իր պատկերը հայելու մէջ, վագում է հայելու ետեւը՝ իր թուացեալ խաղընկերոջ հետ խաղալու համար:

Փղերը եւ մեծ կապիկները ու նաեւ ղելֆինները այն սահմանափակ թուով կենդանիներից են, որ կարող են յաջողութեամբ անց կացնել այս քննութիւնը: Երեքն էլ համապատասխանում են քննութեանը. երբ նրանք իրենց հայելու մէջ էին տեսնում, ստուգողները ներկով կէտեր նշանակեցին նրանց ճակատին, նաեւ մարմնի ուրիշ մասերում: Որոշ կապիկներ կարողացան իրենց հայեացքը յռել իրենց ներկած կէտերի վրայ եւ մատներով շօշափել դրանց: Դա մեր սպասելիքից աւելի շատ էր, իսկ ղելֆինները իրենց մի դիրքում էին պահում, որ կարողանային նշանակած նշանները աւելի լաւ տեսնել:

Ուշիմութիւնից բացի

Եթէ կենդանիները ունակ են տրամաբանելու, նոյնիսկ շատ սկզբնական եղանակով, անխուսա-

փելիօհրն ծագում է մի երկրորդ հարց՝ արդեօք նրանք զգացումներ ունեն: Նրանք արդեօք ունակ են կարեկցելու եւ յուզական ապրումներ ունենալու: Արդեօք նրանք կարող են սիրել, ինամել, յուսալ եւ ատել: Եւ այս հարցերի պատասխանները ինչ նշանակութիւն ունի այն բանում թէ մենք ոնց ենք վերաբերում նրանց հետ: Գիտութեան տեսանկիւնից ամենաապահովն այն կը լինէր, որ վագ անցնէր: Սակայն գիտութիւնը իրեն զսպել չի կարողանում եւ արդէն իսկ որոշ գիտնականներ ուսումնասիրում են այս հարցերը:

Դա ապացուցում է, որ փղերը սիրում են իրենց մեռած փղի դիակի մօտ երկար ժամանակ մնալ եւ նկատելի է նրանց վիշտն ու ցաւը: Դրա համար էլ նրանք մեռած փղի ոսկորները տեսնելիս շատ յարգանքով նրան ստուգում են եւ յատուկ ուշադրութիւն են դարձնում նրա գանգին: Կապիկներն էլ մնում են մեռածի դիակի մօտ եւ երկար շարան են կազմում՝ օրեր մնալով դիակի մօտ:

Սինգերը՝ կենդանիների ազատութեան՝ հեղինակը հաւատում է, որ կենդանիների մէջ երեւոյթներ կան, որ փաստում են, որ նրանք օժտուած են իրենց իրաւունքները պաշտպանելու կարողութեամբ, որ կարողանան ապրել եւ ունենալ հանգիստ ու արժանապատիւ կեանք: Բայց դա մի անհրաժեշտութիւն չէ: Անշուշտ այդ կարեւոր հարց է, որ իրաւունքների սահմանը պիտի աւելի ընդլայնել նրանց կենտրոնում, որ մարդը եւ կենդանիները կարողանան փորձել իրենց համագործակցութեան աշխարհը: Նրանք նոյնանման ցաւեր ունեն եւ հաւասար են բնութեան ողջ դաժանութեան առջեւ, որը զգալի է մարդու եւ նոյնիսկ մի մուկի համար:

Դա կարեւոր չէ, թէ գիտնականները ինչ են մտածում կենդանիների ուշիմութեան մասին: Այնուամենայնիւ գրեթէ բոլորը համակարծիք են ընտանի կենդանիների հանդէպ ցուցաբերող վերաբերմունքի մասին: Այդպիսի վերաբերմունքը արդարացում չունի, չնայած որ աշխարհի որոշ տեղերում բարեփոխումները նոր են սկսել: Միացեալ Նահանգներում կենդանիները կարեւոր են եւ նրանց հետ պիտի զուգուութեամբ վարուել: Սա վերաբերում է մարդու ապրելավայրին, օրինակ նրա գիւղին կամ այգուն, ուր կենդանիներ են պահուած, նույնիսկ կենդանիների փոխադրական միջոցներն էլ պիտի անխնամ չլինեն:

Միացեալ Նահանգներում աննդամ թերքը եւ մսամթերային գործարանները եւ անասնապահութիւնը չափազանց զարգացած են. հազարաւոր տաւարներ եւ խոզեր խցկում են իրար մէջ, հաւերը՝ նեղ վանդակներում, ուր հագիւ են կարողանում կողք-կողքի կանգնել, բայց այս տեղում էլ ժողովրդի կարծիքն ու վերաբերմունքը նկատելիօրէն փոխուել է: Բուսակեր մարդիկ բացատրում են թէ նրանք միս չուտելու պատճառով է, որ դիմել են բուսակերութեան, բայց նորից դա էական չէ, ԱՄՆ-ի բուսակերների թիւը՝ ընդհանուր ժողովրդի միայն 3% -ն է կազմում:

Մենք չենք անտեսում կենդանիների մսի ուտելը, միւս կողմից դա օգտակար է մարդու համար, սակայն այդպիսով մսի սպառումը կը նուազի եւ այդ սպիթ կը դառնայ, որ կենդանիներին աւելի

ՕՐԻՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԺԷՐ

Շարունակուած էջ 2-էն

տի մէկի արիւնահեղութեանը, որ- քան ինքը՝ ՀՀԿ-ն: Պարզ է նաեւ, որ երկուսն էլ բնական դաշնակիցներ են, ուրեմն պիտի շփուեն եւ՝ խորհրդարանում, եւ՝ այլուր:

Ընդդիմութեան դէմ կիրա- ունող ճնշումները՝ թէ՛ ֆիզիկա- կան, թէ՛ հոգեբանական, թէ՛ տնտեսական, լրացում են քարոզ- չական բաւական հին հնարքով: Կոալիցիոն կասկածելի համաձայ- նագիրն էլ դարձել է մի յաւելեալ լծակ վերոյիշեալ հնարքը հասա- րակութեանը մատուցելու համար: Իսկ խօսքը, իհարկէ, ընդդիմու- թեան «միաւորման» մասին է: Ոմանց ոչ մի կերպ հանգիստ չի տալիս ՀԱԿ-ի ժողովրդականու- թիւնը, ամէն կերպ փորձում են անիմաստ վէճեր սարքել եւ հիաս- թափեցնել Հայաստանի քաղաքա- ցիներին: Միայնում են, որովհե- տեւ հասարակութիւնն ինքն է ընտրում այն ուժը, որի միջոցով պիտի իրականացնի իր սահմա- նադրական իրաւունքը, այսինքն՝ պիտի ձեւաւորի օրինական իշխա- նութիւն: Կարծում եմ, որ ընդդի- մութեան «դափնեպսակին» ձգտող ուժերը պիտի ապացուցեն, որ իշ- խանաւորների դաշնակիցը չեն: Եւ սրա համար գոյութիւն ունի երկու կարեւոր պայման՝ մարտի- մէկեան յանցանքի դատապար- տումն ու Սերժ Սարգսեանի հրա- ժարականի պահանջը, ընդ որում՝ անյապաղ, եւ քաղաքանտարկեալնե- րի ազատութեան համար մղուող պայքարին մասնակցելը՝ առանց վերապահումների: Իսկ մնացածը դատարկ խօսակցութիւններ են:

Մի հետաքրքիր տարր կայ, այնուամենայնիւ, այս ամէն ինչի մէջ: Բռնապետութեան սարսափն այս անգամ անթաքոյց է: Երկու-

շաբթի օրը նրանք հաւաքել են բանակի բարձրաստիճան սպանե- րին: Ուժ են ցոյց տալիս, սպանե- րին երեւի ինստրուկտաժ են անում, որ յանկարծ բանակը չանցնի ՀՀ քաղաքացիների կողմը: Առանց այդ էլ երեք տարի է՝ վարկաբեկում են բանակը՝ զինուորականների հետ կապելով մարտիմէկեան ոճրագոր- ծութիւնը: Առանց այդ էլ ամէն ինչ արել են, որ այն վերածուի մի կոռուստացուած կառուցի, որից փախչում են թէ՛ զինակոչիկները, թէ՛ նրանց ծնողները: Եւ սա Սերժ Սարգսեանի նուաճումներից է, ով զգուժ է բանակի արատների մասին բարձրաձայն խօսողներից, որովհետեւ հայոց զինուժը նրա համար սոսկ սեփական իշխանու- թիւնը պահելու միջոց է: Օլի- գարիւնների թիկնազօրը քիչ է 500 000 ցուցարարների դիմակայելու համար: Սակայն կարծում եմ՝ բա- նակի սպայակազմը տեսաւ, որ անգամ արաբական աշխարհում զի- նուորականները ճիշդ կողմնորոշ- ուեցին եւ չդարձան փտած բռնա- պետութեան գործիքը: Ուստի հա- մոգուած եմ՝ թէկուզ լուռ, բայց հետեւութիւններ կ'անեն:

Ուրեմն իշխանութիւն, իհար- կէ, միշտ լինելու է, ուղղակի լինե- լու է օրինական իշխանութիւն: Ուստի այսօր արդէն հասարակու- թիւնն ինքը պիտի դառնայ նախա- ձեռնողը, այսինքն իր իրաւունք- ների տէրը: Սա է բոլոր խնդիրնե- րի լուծման իրական ուղին: Պարզ երեւում է, որ սոցիալական հարցե- րը կը կարողանանք յաղթահարել միմիայն օրինական իշխանութիւն ձեւաւորելուց յետոյ: Իշխանութիւն, որը հաշուետու կը լինի ոչ թէ մի խումբ ուռնացած օլիգարխների, այլ ողջ հասարակութեանը:

«ՁՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՀԲԸՄ-Ի ՀԱՄԱՐԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԳՈՒԷՃՐ

Շարունակուած էջ 8-էն

թեան մասին: Բեմէն կախուած սպիտակ պաստառի վրայ, ան, լու- սարձակուած նկարներով, աղիւ- սակներով եւ թուանշաններով ման- րամանեց իր տուած բացատրու- թիւնները:

Դասաւանդութիւնները կը կա- տարուին հայերէնով կամ տեղական լեզուներով, օրինակ, ֆրանսայի համար՝ ֆրանսերէն, Ամերիկայի համար՝ անգլերէն, Յունաստանի համար՝ յունարէն ու այսպէս՝ նա- յած թէ ո՞ր երկրին կը լուսասփո- ուի դասաւանդութիւնը: Հայկա- կան տառերու ուսուցումը կը կա- տարուի տեսանելի եւ հնչումնային կերպով: Հայաստա գիրը նախ ցոյց կը տրուի այնպէս ինչպէս կը գրուի հայերէնով, դիմացը գրելով օտար լեզուով հնչումը: Օրինակ. Գ, գ-ի հնչումը ֆրանսացիին համար «kim», Շ, շ-ն՝ che կը գրուի, Դդ՝ Te, եւ այսպէս կը շարունակուի:

Կը մտածուի թուրքերէն լեզ- ուի կիրարկման մասին, օգնելու համար թրքախօս թրքահայի հա- յերէն խօսելուն, կարդալուն եւ գրելուն:

Տոքթ. Զօրեան դիտել տուաւ, թէ դասաւանդութիւններու ծրա- գիրները կը մշակուին Երեւանի մէջ, որ մեծապէս կը գործակցի «ՀԲԸՄ Համացանցային Գոլէճ»ի հետ:

Համաձայն յարգելի դասախօ- սին՝ որպէս նորահաստատ միւսեր, «ՀԲԸՄ Համացանցային Գոլէճ»ը կարիքն ունի հայ համայքի մշա- կութային միութիւններուն, կրթա-

կան հաստատութիւններուն, ազ- գային բոլոր կառույցներուն գո- րակցութեան, քաջալերանքին եւ սերտ գործակցութեան:

Դասախօսութեան աւարտին, ինչպէս դիտել տուած էինք նախա- պէս, տրուեցան հարցումներ, որոնց պատասխանեց Պրն. զեկուցաբերը:

Ձեռնարկի վերջաւորութեան, իր հուսկ բանքով հանդէս եկաւ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Վարչական Ժողովի Փոխ Նախագահ Պրն. Սի- նան Սինանեան: Ան հանգամանօրէն ողջունեց Տօքթ. Երուանդ Զօրեանը իր ուշադրաւ, նուիրեալ ու ազգօ- գուտ համացանցային կրթական կատարելագործումներուն համար եւ նորանոր յաջողութիւններ մաղ- թեց անոր: Նաեւ, Պրն. Սինանեան, շնորհակալութեան խօսք ուղղեց հիւրընկալ ՀԲԸՄ Մանուկեան-Տէ- միրճեան եւ ՀԲԸՄ Վաչէ եւ Թա- մար Մանուկեան Վարժարաններու հոգաբարձու մարմիններուն, եւ Հայկական Համացանցային Գոլէճ»ի ծանօթացման կազմակերպիչ Տիկ- նանց յանձնարումներին, ինչպէս նա- եւ ներկայ ունկնդիր հասարակու- թեան, իրենց ներկայութեան հա- մար:

Իր տեսակին մէջ իւրապատուկ նախաձեռնութիւն մըն է նորահաս- տատ «ՀԲԸՄ Համացանցային Գո- լէճ»ը, որ մասնագիտական բարձր կատարողութեամբ եւ համացան- ցային ճանապարհով, կ'առաջադրէ մասնաւորաբար հայ լեզուի եւ ընդհանրապէս հայ մշակոյթի տա- րածումով, սատար հանդիսանալ հայապահպանման վեճ ու սրբազան գործընթացին:

ԱՐԺ. Տ. ՎՐԹԱՆԵՍ ԱԻ. ՔԱՅԱՆԱՅԻ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶ

Շարունակուած էջ 8-էն

Ժարանը եւ Սուրէն Արքեպիսկոպո- սի ձեռամբ կը ձեռնադրուի «Զա- ւէն Աբեղայ» եւ կը միանայ եկեղե- ցական «Զինուորեալ Մանկունք» Սբ. բանակին: Ապա ստանձնած է զանազան հովուական եւ ուսուցչա- կան պաշտօններ Սուրիոյ զանազան քաղաքներու մէջ: Համաշխարհա- յին Բ. պատերազմէն վերջ, երբ Միացեալ Նահանգներու մէջ, մեծ կարիք կար հայախօս կղերական- ներու, 1964ին Սիոն Առաջնորդ Սրբազանին, հրաւերով կու գայ Արեւելեան թեմ եւ կը ստանձնէ Իլինոյ նահանգի հովիւի պաշտօնը: Չորս տարի յետոյ Առաջնորդ Թոր- գոմ Սրբազան Մանուկեան, այժմ Թորգոմ Պատրիարք Ի Երուսաղէմ, կը հրաւիրէ զինք ստանձնելու Նիւ ձըրզի քաղաքի Ս. Խաչ եկեղեցւոյ հովիւի պաշտօնը եւ վերջապէս 1976ին կը հաստատուի Ուաշինկ- թըն Տի Սի որպէս հովիւ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ: Մեծ է Տէր հօր ներդրումը Ս. Աստուածա- ծին եկեղեցւոյ մէջ: Կը բարեգործէ եւ գրեթէ կը կրկնապատկէ եկեղեց- ւոյ համալիրը օժտելով գոյգ սրահ- ներով, խոհանոցի բոլոր յարմա- րութիւններով եկեղեցւոյ ձեռնարկ- ներու համար: Հինգ երկար տարի-

ներ վարիչ տնօրէնն է Ս. Վարդան ձամբարի: Երեք տարիներ Հ.Բ.Ը.Մ.ի քէմբ Նուպարի տնօրէն: Հինգ տարիներ Առաջնորդարանի եւ Հ.Բ.Ը.Մ. գործակցութեամբ Երի- տասարդ ուսանողներ տարած է Հայաստան, ամառուայ շրջանին, հայրենասիրութիւն ջամբելու այդ պարման-պարմանուհիներուն եւ օգ- տակար հանդիսանալու հայրենի ժո- ղովուրդի կարիքներուն եւ վերջա- պէս 2008ին հանգստեան կը կոչուի Սբ. Աստուածածին եկեղեցւոյ հովիւի պաշտօնէն, 32 երկար տարիներ ծառայելով որպէս քաջ հովիւ:

Բայց Տէր Հայրը հանգստեան կոչուելէ ետք գրեթէ ամէն կիրակի որպէս այցելու Ս. Պատարագ կը մատուցէ եւ կը քարոզէ զանազան գաղութներու մէջ, հակառակ իր ֆիզիքական եւ առողջապահական դժուարութիւններուն:

Վարձքը կատար Ս. Աստուա- ծածին եկեղեցւոյ հոգաբարձու- թեան, որ նման ազգօգուտ ձեռ- նարկ մը կազմակերպած է, որպէս յարգանքի տուրք Տէր հօր իր կենդանութեան օրօք:

Տէր Հայր ձեզի կը մաղթեմ քաջաւորող կեանք եւ արեւշատու- թիւն, որպէսզի կարենանք շարու- նակել ձեր ազգօգուտ եւ Աստուա- ծահաճոյ գործը:

ԱՊԱՔԻՄԱՆ ՄԱՐԹԱՆՔ

«Մասիս» Շաբաթաթերթի վաստակաշատ աշխատակիցներէն՝ ծանօթ պատմաբան Աւետիս Փափագեան, շրջանէ մը ի վեր հիւանդ ըլլալով անկողնոյ կը ծառայէ: Շուտափոյթ եւ կատարեալ առողջութիւն կը մաղթենք իրեն:

«Մասիս»

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Քետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր,
եւ կը ցանկաք գանձնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝
հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՔԱՉ ՆԱԶԱՐ
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան
ժամը 10:00-ից 12:30
Կլէնտէյլի 380-րդ կայանից

ՇՈՒՊԱՐ ՄԻՍԻ-ԳԷՈՐԳԵԱՆԻ



Հանգուցեալ ԳՐԻԳՈՐ ԳՈՒԶՈՒԵԱՆԻ մահուան առաջին տարեկիցին առթիւ Կիրակի, Փետրուար 27ին, 2011 հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Պըրպանքի Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնդեանց Մայր Տաճարին մէջ (3325 N. Glenoaks, Blvd., CA 91504), յաւարտ Ս. Պատարագի:

Սգակիրներ՝ Այրին՝ Կիւլէն Գուգուեան Դուստրը՝ Հուրիկ Գուգուեան Դուստրը՝ Կարօ եւ Սիլվա Մարլեան եւ զաւակները Տղան՝ Յակոբ եւ Նայիրի Գուգուեան եւ զաւակները Դուստրը՝ Վազգէն եւ Սեդա Խոտանեան եւ զաւակը Քոյրը՝ Ալիս Յարութիւնեան եւ զաւակները Եղբօր տիկինը՝ Մարիթան Գուգուեան եւ զաւակները եւ համայն հարազատները եւ բարեկամները:

ԳՐԱԿԱՆ ՍՓԻՒՔ-2010

Շարունակուած էջ 14-էն

«Հայկազէն Ուզունեան»: Տարեգրքում ներկայացուած նրա «Միւսը» պատմուածքի հերոսը ներառւած է հային փնտրողներին մէջ ինքնութեան հաստատման ճանապարհներին և հոգեզմայլանքի ու հոգեվարքի հոգեվիճակներով: Արձակագրի հարուստ լեզուն ու ապրումի իրականութիւնը իր ստեղծագործութեան առաւելութիւնն են, համոզիչ, միաժամանակ առինքնող:

Հայկազէն հրապարակագիր, ակնարկագիր Յակոբ Միքայէլեանը ծանօթ է իրականութեան, երեւոյթների ու մարդկային յարաբերութիւնների քննական եւ անաչառ վերաբերմունքի, սրատես հայեացքի իր գրութիւններով: Ուսուցիչ է, նաեւ անմիջական մասնակից հայկազէն թատերական կեանքի: «Այսպիսի տարեգրք» խորագրով էսսէ է ներկայացուած տարեգրքում, որտեղ հեղինակը նկարագրում է երեւանեան իր օրերից մէկը, առաջին տարեգրքը Հայկազի գուր, անորոշ տրամագրութեամբ, որն աւարտուած է սակայն գեղեցիկ անակնկալով, անսպասելի տօնականութիւն սեղանի շուրջը Յակոբ Յակոբեանի, Կարպիս Սուրէնեանի, Սօս Սարգսեանի, Նիկոլայ Մատուրեանի հրաշալի ներկայութեամբ: «Հայաստանը քար ու լեռ է, դաշտ ու անտառ, երկինք ու ջուր է, եկեղեցի ու յուշարձան է միայն, թէ այս է իսկական Հայաստանը, այս մարդոց մէջ, այսպիսի՛ հայրենասէր, հայրենանուէր մարդոց մէջ է Հայաստանը...»:

Արձակի բաժնում ներկայ են նաեւ Սեդա Գրիգորեանը, Պերճուհի Աւետեանը, Կոլիա Յովհաննիսեանը. վերջինիս «Եւա» պատմուածքը պարզ, սակայն հետաքրքրական ընթերցող էջեր են կանա-

ցի հոգեբանութեան թաքուն շերտերի նուրբ վերհանմամբ:

Թատերգութեան ժանրում ներկայացուած է 2 հեղինակ. Արա Արծրունին պէջրութեամբ գրող, հրապարակագիր, բազմաթիւ պիէսների հեղինակ է, հրատարակուած նաեւ Երեւանում արեւելահայերէնի փոխադրուած: Հեղինակ է «Սպիներ», «Հերցոֆ» վիպակների, «Մովինար» վէպի: Տարեգրքում ընդգրկուած է նրա «Ո՞վ է բախում դուռը» կատակերգութիւնը: Իրանահայ թատերագիր Խորէն Արամունին բազմաժանր ստեղծագործող է վիպակների, պատմուածքների հեղինակ («Անվերադարձ ապագայ», «Մահուան պար», «Թատրոն»), մի շարք պիէսներ բեմադրուել են Լոս Անճըլեսում: Ներկայացուած է «Հարսնացուն թուրքիայից» դրաման:

Գրականագիտութեան բաժնում ընդգրկուած են Մարի Ռոզ Աբուսէֆեանը, («Հաճի Մուրատ» վէպի առանձնայատկութիւնից մի հատուած), Հրաչեայ Սարիբեկեանը («Զաւէն Պիպեռեանի» «Մըջիւններու վերջալոյսը» եւ էքզիստենցիալիզմը), Յարութ Մարաշլեանը («Նիկողոս Մարաֆեանի «Տեղատուութիւն եւ մակընթացութիւն ժողովածուն»), Սոնա Մնացականյան («Բանաստեղծական արուեստ-բանաստեղծական խաղ»), Մարգար Շարաբխանեանը («Յակոբ Կարապէնց. մարդն ու գրողը»), Արմէն Աւանեսեանը («Միտհայզ գրականութեան դիմագիծը»):

Տարեգրքը տպագրուած է հեղինակների նախընտրած ուղղագրութեամբ: Շապիկի նկարը եւ ներսի ուրուանկարները Գառգուի աշխատանքներից են: Շապիկին բացակայում է նման հրատարակութիւնների համար պարտադիր համապատասխան տարեթիւր:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԻԹ

ՇՈՒՊԱՐ ՄԻՍԻ-ԳԷՈՐԳԵԱՆԻ



Հանգուցեալ ՆՈՒՊԱՐ ՄԻՍԻ-ԳԷՈՐԳԵԱՆԻ մահուան քառասունքին առթիւ հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Շաբաթ, Փետրուար 26, 2011, կէսօրուան ժամը 12ին, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, 500 S. Central Ave.:

Սգակիրներ՝ Այրին՝ Տիգրանուհի Մխիթ-Գէորգեան Դուստրը՝ Լուսի եւ Վիլիամ Մարտիրոսեան եւ զաւակը՝ Բաֆֆի Զաւակը՝ Վարդան եւ Սիւզան Մխիթ-Գէորգեան եւ դուստրերը՝ Վերոնիկա եւ Էլիզապէթ Եղբայրը՝ Ներսէս Մխիթ-Գէորգեան եւ զաւակները իրենց ընտանիքներով Եղբօր զաւակները իրենց ընտանիքներով Եւ համայն Մխիթ-Գէորգեան, Քասիքեան, Քէչէջեան, Եանիկեան, Վարժապետեան, Քէշիշեան, Սալաթեան, Դարբինեան, Աւետիսեան, Թաշճեան, Վարդանեան, Մարտիրոսեան, Թորոսեան եւ Գարամանուկեան ընտանիքներն ու հարազատները: Հոգեհանգստեան պաշտօնէն ետք հոգեճաշ պիտի մատուցուի Կլենտէյլի Renaissance ճաշարանին մէջ, 1236 S. Central Ave.:

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՈՒՂԵՂԻ ԽՈՐՔՈՒՄ

Շարունակուած էջ 17-էն

լաւ խնամենք: Այնուհետ մեր ուշադրութիւնը դարձնենք դէպի կենդանաբանական այգիների եւ ձկնաբուծութեան կենտրոնների վրայ եւ ուրիշ տեսակ կենդանիների հետ զուարճանանք:

Ի վերջոյ, նոյն կենսաբանական լծակը, որ կարգաւորում է կենդանիների մօտ խելամուտութեան շատն ու քիչը, նոյնն էլ պիտի որոշի թէ մենք ինչպէս պիտի արժեւորենք, թէ տարբեր կենդանական տեսակներ ինչպէս են վարում իրենց կեանքը: Մի կապիկ իր աշխարհում կարելի է իր համար գիտնական լինել, եւ որեւէ կենդանու ստոր կեանքն էլ կարող է նրան

մեծ գոհունակութիւն պատճառել: Քանզի բառապաշարը լիքն է այնպիսի բառերով ինչպիսիք են «նուդլ», «չաքար», «բաղցրեղէն», եւ «գիշեր», բայց երբեմն նաեւ «լաւ», «ուրախ լինել», «վաղը» եւ նման բառերով: Եթէ դա ճիշտ է, որ այս բառերը բոլորը իմաստ ունեն նրա համար, այդ դէպքում, կեանքը, որ նա ապրում է, ինչպէս նաեւ այլ կենդանիների կեանքը, կարող է իրօք հարուստ եւ իմաստալի կեանք լինել:

Թարգմանեց Լեւոն Ահարոնեանը «Թայմ» շաբաթաթերթ, Օգոստոս 16, 2010 թ. համարից «Յոյս»

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳԱՅՈՂ ՅԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ մնջարան, մեծ մատասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քարուղի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450





LET'S PUT PASADENA FIRST

C KHATCHIK "CHRIS"
CHAHINIAN

FOR CITY COUNCIL

Հայ գաղութին
Հայ գաղութին
համար

WWW.CHAHINIANFORCITYCOUNCIL.COM

Խաչիկ «Քրիս» Շահինեան եղած է Փասադինայի բնակիչ աւելի քան 20 տարիներ: Փոքր գործառքի սեփականատր է, համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն եւ ընտանիքի հայր: Խաչիկ եւ իր կինը՝ Ռիթան, ունին երեք զաւակներ՝ բոլորն ալ յաճախած են Փասադինայի հանրային վարժարանները:

Համայնքային ծառայութիւններուն մաս կը կազմեն հետեւեալները.

- 2007էն ի վեր վարչութեան անդամ՝ 4րդ Շրջանի, Փասադինայի Համայնքի Ներթափանցման Միութեան (Pasadena Community Access Corporation):
- Հիմնադիր՝ «Հայ Ինքնութեան Հունձք»ի (Armenian Identity Harvest):
- Համայնքին ծանօթ, 2010ի ԱՄՆ Մարդահամարին օժանդակից:
- AYSOի կամաւոր մարզիչ:
- Put Pasadena First Խաչիկ Շահինեան զօրավիգ կը կանգնի փոքր գործառքներու:
- Վարժարաններու Բարձր Որակե Գեղատու ՆստաՊատահութիւն է
- Թմրեռոտ Մաքրութիւն եւ Երօթեպիտեան Կանոնադրութիւն Առաջնաբերօ է

Օգտուելով ղեկավարման փորձառութենէն, Շահինեան կը ցանկայ մեր համայնքին մէջ այս կարելոր նպատակներուն հասնիլ: Կը խնդրուի Փասադինայի մասին ձեր հոգերն ու հարցերը կիսել Խաչիկ Շահինեանի հետ, հեռաձայնելով անոր՝ (626) 399-1799 քիւիւն, կամ՝ գրել հետեւեալ եմակին (Ելեկտրոնային նամակ) chahinianforcitycouncil@gmail.com



Միա՛կ Հայ թնկնածուն, որ կը վայելէ Հայ համայնքին աջակցութիւնը

Փասադինայի Հայ Գաղութային Երեսմէ

Քուէարկեցէք Խաչիկ «Քրիս» Շահինեանին Մարտ 8ին

Չեր քուէն՝ ձեր ձայնն է



Չախէն՝ Ստոա, Իսչիկ «Քրիս», Լարա, Ռիթա, Սեակ

